# ԱԶԳ
Azg

3-9 ՄԱՅԻՍ 2024 ՈՒՐԲԱԹ 015(5797)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651


## Կոչ ուղղենք Շուշիում գտնվող տարբեր կրոնների հոգեւոր առաջնորդներին

Շուշիում ընթացող միջմշակութային երկխոսության 6-րդ համաշխարհային ֆորումը, որ նվիրված է «Խաղաղության եւ գլոբալ ավտանգության հարցերին», համախմբել է 38 երկրի հոգեւոր առաջնորդների, կրոնական համայնքների, նաեւ միջազգային 10 կազմակերպությունների ներկայացուցիչների, մայիսի 2-ին ծանուցում է ադրբեջանական պետական «Ազերթաջի» գերմաներեն ծառայությունը: Հյուրընկալ կողմը հոգացել է անշուշտ, որ մահմեդական, քրիստոնյա, հրեա, բուդդիստ, հինդու եւ այլ կրոնադավան ներկայացուցիչներն այցելեն Շուշիի «տեսարժան վայրեր, ծանոթանան վերակառուցման շինարարարական աշխատանքներին»: Լրատվության կից լուսանկարներից մեկում հյուրերի թիկունքում պղծվող սուրբ Ղազանչեցոցն է: Անհրաժեշտ է կոչով դիմել համաշխարհային հոգեւոր այրերին՝ դադարեցնելու հայոց քրիստոնեական ժառանգության դեմ Ալիեւի վանդալիզմը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Հուսահատությունը ժողովրդին մղում է համախմբվել Հայ եկեղեցու շուրջը

Մեր ժողովրդի պատմության օրհասական բոլոր պահերին, բացառությամբ դրսից թելադրված արտառոց մի քանի շեղումների, Հայ Առաքելական եկեղեցին հանդիսացել է հայության վերջին, գուցե միակ պատվարը թե՛ հոգեւոր, թե՛ քաղաքական, նույնիսկ, ճակատագրական որոշ պահերին՝ ռազմաքաղաքական կռվանը, ազգային միավորման, դիմադրողական ոգու կերտիչն ու պահապանը: Լուսավորչի այն կանթեղը, որին նայել ու ոգեշնչվել են, ինչպես մեր մեծագույն բանաստեղծներ՝ Հովհաննես Թումանյանն ու Վահան Թեքեյանն են վկայել, իրարահաջորդ սերունդները վերջին ավելի քան 17 դարերի ընթացքում:

Մեր ձեռքի տակ չկան տվյալներ, թե վերջին 5 տարիներին, ավելի ճշգրիտ՝ 44-օրյա պատերազմին հաջորդած ֆիզիկական ու հոգեկան տվայտանքներից հետո ու մինչեւ այսօր որքանո՞վ է հաճախակիացել հավատացյալների ու ոչ հավատացյալների շփումը Հայ եկեղեցու հետ, նրա սպասավորների՝ քահանաների, աբեղաների, վարդապետների ու եպիսկոպոսների հետ: Ո՞րքան մարդ՝ կին, տղամարդ, երեխա, երիտասարդներ են օրհնություն ու մխիթարություն հայցել նրանցից: Չհաշված որդեկորույս մայրերին, հաշմանդամ դարձած մարտիկներին, հոգեկան խաղաղությունը կորցրած մարդկանց, որոնց տեսնում ենք գերեզմանատներում, եկեղեցիներում, աղոթարաններում: Իմ տպավորությամբ, դա ոչ միայն եւ ոչ այնքան հավատքի, որքան բարոյահոգեկան անդորրությունը չկորցնելու ինքնապաշտպանական ձգտման արտահայտություն է: Նաեւ՝ Ազգային եկեղեցու նկատմամբ վստահության դրսեւորումն է, ի հեճուկս աղանդավորական ապազգային տարրերի, կարգալույծ հռչակված նախկին եկեղեցականների (աբիժնիկների) խարդավանքների: Նաեւ, առաջին հայացքից խիստ տարօրինակ, ի հեճուկս սեփական երկրի իշխանության, որը առաջին օրվանից իր պարտքը համարեց, հակառակ զգուշացումների, նսեմացնել Հայ եկեղեցու դերն ու կարեւորությունը հայ ազգի համար, վարկաբեկել եկեղեցականությանը, անտեսել նրա պատմությունը, դրժել նրա ազգային-ինստիտուցիոնալ նշանակությունը մեր ժողովրդի, համայն հայության համար:

Իշխող կազմակերպության եւ առաջին հերթին՝ նրա պարագլխի շինծու ամբաստանությունը եղել է այն, որ Եկեղեցին քաղաքականությամբ է զբաղվում, մինչդեռ նրա պարտականությունը պետք է լինի հոգեւոր ծառայությունը...

Այսպիսով, իշխող վարչակազմը եւս մեկ անգամ մոռանում է Մայր օրենքի՝ Սահմանադրության բնորոշումը Հայ Առաքելական եկեղեցու մասին՝ որպես ազգային բացառիկ նշանակություն ունեցող կառույցի:

Երկրորդ՝ մոռանում, ավելի շուտ՝ փորձում է մոռացնել տալ, որ Հայ եկեղեցին, ի դեմս նրա երջանկահիշատակ առաջնորդի՝ Վազգեն Ա. Հայրապետի, հիմնադիրներից է Հայոց նոր պետականության եւ առաջին մեկենաս-նվիրատուն (այս պարագան շատ-շատերը չգիտեն) նորանկախ մեր պետության:

Երրորդ՝ ազգային-պետական համակարգի փլուզման ներկա պայմաններում Հայ եկեղեցին, հաչս մեր ժողովրդի եւ նույնիսկ օտար պետությունների (այս մասին կարդալ մեր ներկա համարի 2-րդ էջում իրանագետ Գր. Առաքելյանի հոդվածը), կայուն, լրջախոհ եւ հարգված միակ կառույցն է, որը արտահայտում է, անմիջականորեն, իր հոտի՝ ժողովրդի կամքը:

Այդ կամքը լավագույնս դրսեւորվում է այս օրերին Տավուշում, հայտնի 4 գյուղերի, հարակից ռազմակա՛ն հենակետերի ու դիրքերի չպատճառաբանված եւ անհեթեթ հանձնումով, բնակիչների տների ու կալվածների հաշվին, 7-րդ դարից պահպանված Սբ. Աստվածածին եկեղեցու հաշվին: Ու տեղի բնակիչների, նույն դավաճանական գործարքների սպառնալիքի տակ գտնվող այլ տարածքների ու դիրքերի բնակիչների, ժողովրդի՛ կամքին ընդառաջումն է պարզապես, որը տեսնում ենք բոլորս, ի դեմս մեր Եկեղեցու հայրերի, այս պարագայում՝ անձնավորված Բագրատ արք. Գալստանյանի ներկայացուցչական մասնակցությամբ, որպես, ինչպես ինքը՝ Սրբազանն է բնորոշում, իր հոգեւոր տիրույթի պատասխանատու, առաջնորդը:

Այդ առաջնորդությունը արտահայտությունն է նաեւ իշխանության նկատմամբ, նրա միայն կաշառքով աշխատող ենթակառույցների նկատմամբ առկա համաժողովրդային դժգոհության ու բողոքի, անցնող տարիների ընթացքում ընդդիմադիր այս եւ այն խմբավորումների գործողությունների ձախողության, Ազգային ժողովի ու կառավարության պարտվողականության եւ հանձնվողականության, համատարած ստերի ու կեղծումների, մեկ խոսքով՝ արտահայտությունը այդ բոլորի պատճառած անզորության, հուսահատության, դրանցից ձերբազատվելու ձգտումի: Եվ շատ բնական ու տրամաբանական է, նաեւ՝ 17 դարերի պատմական փորձով, ինքնաբերաբար ծագած ձգտում՝ կառչելու, ապավինելու, համախմբվելու Ազգային եկեղեցու շուրջը:

Բոլորն են համոզված, որ Հայ Եկեղեցին ո՛չ ձգտում ու ո՛չ էլ փափագ ունի իշխանություն դառնալու կամ կրոնապետություն հաստատելու մեր երկրում. դա նրա գործը չէ եւ ոչ որ չի հանդուրժի նման բան: Նրա գործը, նրա պատմական առաքելությունը ազգի համախմբումն է ընդդեմ անիրավության, պարտվողականության, հայրենիքի ու նրա սահմանների շուրջ փերեզակության, հուսալքության:

Դժվարին պարտականություն, որը ստանձնել է մեր Եկեղեցին, հավասարիմ՝ միշտ ժողովրդի կողքին ու միշտ հայրենիքի ու պետականության նեցուկ լինելու աստվածատուր հանձնառության: Լինելու են, ինչպես հիմա՝ Բագրատ Սրբազանի եւ հոգեւոր մյուս հայրերի ու Հայրապետի դեմ, անպակաս են լինելու խարդավանքները, նենգամիտ հրահրումներն ու, նույնիսկ, բռնարարքները:

Պահն է դիմացկունության, համաժողովրդային դիմադրողականության ծավալումի, համախմբման: Զախողությունն ու ընկրկումը բացառված պետք է լինեն: Դա կործանարար կլինի մեր երկրի ու պետականության համար:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Լեգիտիմ հարց

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ազգային ժողովը այս երկու օրը ծանր գործով էր զբաղված, հանրության աշխատող զանգվածի՝ վարձատրության առումով ամենաէլիտար կառույցներ ՀՌԱՀ-ի հաշվետվությունն ու ԿԸՀ-ի տարեկան հաղորդումն էր քննարկում, մենք մեր փոքր աշխատավարձերով ո՞վ ենք, որ այդ խոսակցությանը հանկարծ մասնակցենք թեկուզ մամուլով, մի բան էլ՝ քննադատենք, կամ դժգոհություն հայտնենք այսուհայն անհարմարությունից: Այս կառույցների աշխատանքում ամեն բան իր հունով յուղի պես գնում է, թե բա՝ թափանցիկություն, հերոսական աշխատանք, շնորհակալություն, հաջողություն, բլա-բլա. ի՞նչ գրենք, ախր, այդ կառույցները հիմա եվրոպաների տրտի հիմնարկներն են, թղթերով, կանոնադրություններով: Ու միակ անհարմարությունը այդ հաշվետվությունների քննարկումների ընձեռած առիթներն են ընդդիմությանը եւ իշխանությանը՝ բոլորիս հոգնեցրած հերթական բախման համար: Դե դրանց էլ կարելի է չնայել ու չլսել, կամ նայել որպես ուշագրավ ժամանցի:




Ավելի կարեւորը կամ ամենակարեւորն այս օրերին շարունակում է մնալ Տավուշում կատարվողը, իշխանության նկարագրությամբ՝ սահմանազատման, ընդդիմության նկարագրությամբ՝ հողերի միակողմանի հանձնման գործողությունը, որի վերաբերյալ վերջին օրվա տեղեկատվությունն այն էր, որ ականազերծման իրականացման դեմ բողոքող կիրանցեցիներին ուժի կիրառմամբ բերման են ենթարկել:

Չխորանալով բողոքի դրսեւորման դրվագներում, կամ այդ բողոքի մեջ բացի տեղացիներից այլ ներգրավվածներին չանդրադառնալով՝ կենտրոնանանք գլխավոր հարցի վրա, որը բոլորի սրտում եւ շուրթերին է, եւ չնայած կիլոմետրանոց տեքստերով կամ բազմաժամ տեսանյութերով ԶԼՄ-ներում առկա կամ մեր ներկայությամբ հնչած պատասխաններին, այդ թվում՝ վարչապետի վերջին բացատրություններին, իրական եւ բոլորին բավարարող պատասխան մինչեւ այժմ չի հնչել առ այն, թե ինչու հնարավոր չէ փաթեթով ու նախ թղթի վրա հստակեցնել Հայաստանի սահմանների ողջ ուրվագիծը, դրա վերաբերյալ պայմանավորվել ոխերիմ հարեւանի հետ, ապա սկսել սահմանազատում կամ սահմանագծում: Այդ առաջարկը շատ հստակ հիմնավորում ունի. նախ կիմանանք՝ դուրս բերվելո՞ւ է ադրբեջանական զորքը Ջերմուկից, Ալ լճերի շրջանից, Ներքին Հանդից եւ այլ ապօրինի զավթած տարածքներից, կիմանանք՝ ինչպե՞ս է լուծվելու մեր երեսունմեկ զավթված գյուղերի, Արծվաշենի հարցը, ապա ադրբեջանական անվանված ինչ-որ տարածքներ վերադարձնելու մասին կխոսենք: Այդ հստակեցման արդյունքում հնարավոր է, որ այլ որոշումներ կայացվեն, քանզի բանակցությունները նաեւ սակարկություններ են, դրանք կարող են վերաբերվել նրան, որ ողջ սահմանների երկայնքով մի հատվածում կարող է մեզ համար նպատակահարմար չլինել մեր այս կամ այն տարածքի հանձնումը, քանի որ դիցուք դա մեզ համար կենսական տարածք է, ինչպես Կիրանցում է, կամ անվտանգային առումով ապահով չի լինի՝ ադրբեջանական սահմանը մոտեցնելով մեր տներին (ասենք՝ Կիրանցում), իսկ մի այլ հատվածում տեխնիկապես եւ հոգեբանորեն հնարավոր չի լինելու հայերի բնակությունը:

⇨6

## Ապրիլի 24-ի Ուրացման շաբաթը

### *Գերմանիայի նախագահը սեղմում է Էրդողանի, կանցլերն ու արտգործնախարարը՝ Ալիեւի ձեռքը*

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

**Գերմանիա**

Ամեն տարի Ապրիլի 24-ին Գերմանիան քննություն է հանձնում: Անցյալի եւ ներկայի մի քանի ցեղասպանությունների ոճրագործն ու մեղսակիցը նոր եռանդով է հեգնում տնտեսապես տկար պետություններին, ուրանալով ուրանում Զոհերին, վերաշարադրում ի՛ր անփառունակ պատմությունը: 2016 թվականի հունիսի 2-ին Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւից հետո, որ կառավարության համար պարտադիր բնույթ չէր սահմանում, ԳԴՀ տարեցտարի ավելի է մոռանում եւ մոռացնել տալիս գերմանացիների նախընտրած ձեւակերպմամբ՝ «համապատասխանատվության» մասին: Քրիստոնյայի համար մի բառեզր կա՝ «մեղսակցություն»: Այս բառը Գերմանիայում հիշում են, երբ որեւէ երկիր ՌԴ-ին սատարում է:

Գերմանիայի ուրացումը հստակ նշաններ ունի՝ սկսվում է այդ երկրի նախագահի, մասնագիտությամբ իրավաբան **Ֆրանկ Վալտեր Շթայնմայերից**: Նա հաստատակամ է՝ 2015-16-ին էլ դեմ է եղել Հայոց ցեղասպանության ճանաչմանը, երբեւէ փոփոխություն չենք նկատել նրա դիրքորոշման մեջ, ավելին՝ 2024-ի ապրիլի 24-ին նա Անկարայում էր, եռօրյա այցի վերջին օրը սեղմում էր ձեռքը **Ռեջեփ Թայիփ Էրդողանի**, որ նույն օրվա ուղերձով սպառնում էր հայերին, Հայաստանին: Գերմանական ռադիոն նույն օրն առավոտյան եթերում հաղորդեց, թե Միջազգային համաներում( Amnesty international) կազմակերպության 2023-24 տարեկան զեկույցի համաձայն, աշխարհում աճել է վայրագ, բիրտ ուժի կիրառումը՝ հիշատակելով 3 օրինակ՝ Իսրայել- Պաղեստին, Ուկրաինա- ՌԴ, Սուդան: Ոչ մի խոսք Արցախի, Ադրբեջանի մասին:

⇨5

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Գաղթ

Նոր աւարտեցի Գուրգէն Մահարիի «Այրուող այգեստաններ» վէպի երկրորդ ընթերցումս. 620 էջը մէկ շաբաթուան ընթացքին... ինծի համար մարաթոնեան վազք մըն էր, քանի որ արագ ընթերցող չեմ եւ յաճախ լրիւ տարբերութիւն մը կրկին կը կարդամ: Երիտասարդ տարիքիս կարդացած էի ու հիմա կրկին կը կարդամ Մահարիի բոլոր գործերը:

Անշուշտ ամբողջ գիրքը Վանի մասին է, այնքան մանրամասնօրէն նկարագրուած, որ գիրքը աւարտելէդ ետք կը կարծես, որ Վանը աչքերովդ տեսած ես, քեզի ծանօթ քաղաք մըն է իր եդեմական այգիներով, հայ վարպետ արհեստաւորներու խանութներով, հարուստ շուկաներով, փողոցներով եւ անպայման Վանայ ծովով ու անոր կղզիներով:

Ինչեւիցէ, հարցը այս չէ, այլ՝ գիրքին ողբերգական աւարտը, ուր վանեցիները երկու օրերու ընթացքին կը լքեն իրենց ծննդավայրը, ենթարկուելով հրահանգի մը, որ կու գայ երեւի ռուսական բանակէն, որ օգնութեան հասած էր վանեցիներուն ինքնապաշտպանական կռիւներուն ընթացքին օսմանեան բանակին դէմ, զիրենք եւ քաղաքը փրկելու թրքական ծանր լուծէն: Տեղացիներուն ուրախութիւնը երկար չի տեւեր, քանի կը հասնի տեղահանութեան ու գաղթի հրահանգը: Կը տիրէ ահաւոր իրարանցում, լաց ու կոծ, ունեցուածքի կորուստ, փախուստ, փախուստ... հայերը զոհ կ՛երթան ռուս-թրքական համաձայնութեան:

Հիմա կը տարուիմ մտածելու. այս քանի-քանի՜ անգամներ հայը ստիպուած եղած է իր բնակավայրէն դուրս գալու, գաղթելու ու նոր կեանք մը սկսելու նոր կայքի մը մէջ: Միշտ շիներ է, շէնցուցեր, յետոյ ձգեր ու փախեր: 1045-ին, երբ Անին «ծախուեցաւ», հայերը Ռուբէն իշխանի առաջնորդութեամբ լքեցին երկիրն ու արեւմուտք ուղղուելով հասան Կիլիկիա, գրաւեցին ու հիմնեցին Ռուբինեան իշխանութիւնը, իմա՝ Կիլիկեան թագաւորութիւնը: 300 տարի ետք ինկաւ Կիլիկիան, եւ հայերը դարձեա՛լ գաղթեցին: 19-րդ դարավերջին 1895-96-ի ջարդերը, Յետոյ եկաւ 20-րդ դարն ու տեղահանութեանց նոր պատմութիւնները՝ 1909-ի Ատանայի կոտորած, 1915 Մեծ եղեռն, յետոյ Վանի պարպում, Կարսի պարպում, գաղթ ու գաղթ, մինչեւ հասան մեր օրերն ու բոլորս ականատես եղանք նոր գաղթերու՝ անկախացած Հայաստանէն գաղթ դէպի Ամերիկաներ ու այլուր: Շուշիի յարակից բնակավայրերու գրաւում, պարպում ու գաղթ, մինչեւ հասաւ Արցախի ամբողջական պարպումն ու գաղթը դէպի Հայաստանի հանրապետութիւն, անկէ ալ դէպի... Իսկ այս օրերուն՝ Տաւուշի գիւղերուն պարպումի ու թշնամիին յանձնումի հերթը...

Բարեկամներ, կը հասկնա՞ք այս ողբերգութեան ահռելիութիւնը: Անկասկած, հայը շինարար ժողովուրդ է, սակայն շինածը պահել չի՞ գիտեր արդեօք, թէ՞ չի կրնար: Խաղաղասէր է, սակայն չի՞ գիտեր, որ խաղաղութիւնը շահելու եւ պահելու համար ոյժի պէտք ունի, զէնքի ու զօրաւոր բանակի պէտք ունի: Ամէն օր աղօթելով, ամէն կիրակի եկեղեցի երթալով, մոմ վառելով զէնք ու զրահ մէջտեղ չի գար, երկիրը չամրանար: Շինածդ, ունեցածդ պահպանել պէտք է գիտնաս: Եւ ասիկա քու սեփական ջանքերովդ պիտի ըլլայ, ոչ ուրիշը օգնութեան կանչելով:

Կարծես հայը ծնած է գաղթականի ցուպը ձեռքին, ատենը անգամ մը տունն ու տեղը լքելու եւ օտար ափեր դիմելու պարտադրանքի տակ:

Ինչքան փորձենք չքմեղանալ, թէ բախտերնիս այդպէս բերած է, աշխարհագրական դիրքերնիս վտանգաւոր եղած է, երկիրնիս թշնամիներով շրջապատուած է... անօգուտ է: Ռազմիկ չե՞նք: Սխա՛լ, շատ ալ լաւ ռազմիկներ ունեցած ենք եւ ունինք: Զէ՞նք, զրահ... գիտնականներ ունինք, զէնքի ու զրահի նոր տեսականիներ փորձարկող ու ստեղծող: Խաղաղասէր ենք եւ ուրիշի ունեցուածքին վրայ աչք չունի՞նք. Շատ բարի, բայց ուրիշը մեր ունեցածին վրայ աչք ունի, ուրե՞մն...

Ուրեմն ունեցածնիս պաշտպանելու այնպիսի միջոցներ ձեռք առնելու ենք, որ թշնամիին ախորժակին վրայ քացախ լեցնենք: Բռներ ենք մեր հին, պատմական քարտէսն ու կը բաղդատենք այսօրուան պատառ մը Հայաստանին հետ. հիմա նստիլ եւ անցեալի սխալները վերլուծե՞լ, թէ՞ այս մնացածը վերջնականապէս ապահով ու ամրակուռ պահելու միջոցներ որոնել ու գտնել, որ,- Աստուած մի՛ արասցէ,- այս կտորն ալ ձեռքէ չերթայ:

Համաձայնութիւններ, դաշինքներ, խաղաղութեան կոչեր... ես հաւատացողը չեմ. Ժամանակները կը փոխուին, իշխանութիւնները կը փոխուին ու դաշինք-մաշինք օդը կը ցնդին: Մնայունը ոյժն է. ոյժ ունի՞ս, խաղաղութիւնդ ապահոված կ՚ըլլաս:

# Իրանն ու Հայ Առաքելական եկեղեցին տավուշյան շարժման համատեքստում

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

*Իրանում ՀՀ նախկին դեսպան*



Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ տեղի ունեցող խնդրահարույց սահմանազատման ու սահմանագծման գործընթացի ու տավուշյան վերջին իրադարձությունների նկատմամբ Իրանի ցուցաբերած առանձնահատուկ ուշադրությունը պայմանավորված չէ միայն տարածքային ամբողջականության հարցում Թեհրանի սահմանած «կարմիր գծով» եւ Հյուսիս-Հարավ միջանցքում Հայաստանի խաղացած նշանակալի դերակատարությամբ: Ընթացիկ քաղաքական անցուդարձերում Հայ Առաքելական Եկեղեցու խաղացած դերակատարությունը նույնպես այդ առանձնահատուկ վերաբերմունքի գլխավոր պատճառներից է:

Կա կարծրացած պատկերացում, որ Արեւմտյան ու Կենտրոնական Եվրոպայի երկրների մշակութային եւ գաղափարական զարգացման դարաշրջանում տեղի ունեցած «Վերածնունդից» հետո, այլեւս քրիստոնեությունը ժողովուրդների սոցիալ-քաղաքական կյանքում դերակատարություն ստանձնելու մենաշնորհային կարգավիճակից զրկվել է: Սակայն, արդյո՞ք այդ պատկերացումը կարելի է ընդհանրացնել նաեւ Հայ Եկեղեցու վրա:

Դարեր շարունակ պետականությունից զրկված Հայաստանի համար եկեղեցու դերը եղել է առանձնահատուկ, եւ այդ հանգամանքը չի վրիպել կրոնապետական Իրանի տեսադաշտից:

**Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի** ղեկավարած ներկայիս շարժումը կարծես Իրանի Իսլամական Հանրապետության հեղափոխական վերնախավի մոտ շահական Իրանում այաթոլլահ **Խոմեյնիի** առաջնորդությամբ հաղթանակած հեղափոխության հուշերն է արթնացնում:

Բացի այդ, ժողովուրդների քաղաքական կյանքում հոգեւորականների ներգրավվածությունն Իրանի համար որոշակի ազդակ է հանդիսանում այն առումով, որ կառավարման համակարգում կրոնապետական կարգերի ներդրումն արդարացնելու հարցում իրանցիները, իսլամական աշխարհից բացի, կարող են համախոհներ ունենալ նաեւ քրիստոնեադավան երկրներում:

Դատելով իրանցի փորձագետ **Էհսան Մովահեդիանի**՝ «iranian diplomacy» կայքում **«Հուսեյնականների շարժումն ու հայ եկեղեցին՝ Հարավային Կովկասում իրանամետ երկու թեւեր»** վերտառությամբ հրապարակած հոդվածից, Իրանում համոզմունք կա, որ հայաստանյան իրադարձությունները կարող են ազդել Իրանի թե՛ քաղաքական, եւ թե՛ տնտեսական կյանքի վրա: Հեղինակի համոզմամբ, Տավուշի թեմի առաջնորդի գլխավորած շարժման ձախողումը չի բխում Իրանի շահերից: Ելնելով այդ համոզմունքից, հոդվածագիրն Իրանի ղեկավարությանը կոչ է անում Հայաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների հարցում կրավորական կեցվածք չընդունել:

Հեղինակը նաեւ խորհուրդ է տալիս հայաստանյան իրադարձություններին կրոնական պրիզմայով չնայել եւ, քրիստոնեադավան լինելու պատճառով, Հայաստանը չհակադրել մահմեդական Իրանին ու չխուսափել Հայաստանի հոգեւորականների հետ համակեցության եզրեր փնտրելուց:

Հեղինակի խոսքերով՝ «երբ **Ալիեւը** Արաքսի հյուսիսային հատվածը նվիրաբերում է «սիոնիստներին», Մեծ Բրիտանիային, ՆԱՏՕ-ին ու հակաիրանական անջատողականներին, եւ երբ Իրանի շիադավան հյուսիսային հարեւանը Իրանի անտարբերության հետեւանքով վերածվում է Իսրայելի մասնաճյուղի, Հարավային Կովկասում Իրանի միակ հենակետը մնում է Հայաստանը»:

Մովահեդիանի գնահատմամբ, շրջափակման մեջ հայտնված Հայաստանն էլ Իրանի աջակցության կարիքն ունի եւ նման պայմաններում, Իրանը պետք է իր բոլոր համախոհներին օգնության ձեռք մեկնի:

Ըստ իրանցի վերլուծաբանի, այսպիսի իրավիճակում Թեհրանը պետք է Կովկասում իր ազդեցությունը պահպանելու համար նոր եւ ստեղծարար մոտեցում ցուցաբերի:

Մովահեդիանը կարծում է, որ Իրանի կրոնամշակութային կազմակերպությունները պետք է Հարավային Կովկասում տիրող նոր իրավիճակով պայմանավորված, վերանայեն իրենց քաղաքականությունը՝ փորձելով ավելի սերտացնել Հայ Եկեղեցու եւ շիա հոգեւորականների միջեւ հարաբերությունները: Ըստ իրանցի հեղինակի, հաշվի առնելով հայության անհաշտ ու թշնամական վերաբերմունքը հրեականության ու «սիոնիզմի» նկատմամբ, Հայ Եկեղեցու եւ Իսլամական Իրանի միջեւ երկխոսությունը միանգամայն տրամաբանական ու արդարացված կարող է լինել: Հեղինակն իր ասածները հիմնավորելու համար հիշում է վերջին չորս ամիսների ընթացքում հրեաների ու երուսաղեմաբնակ հայերի միջեւ տեղի ունեցած բախումները: Ըստ հեղինակի, Թեհրանն այս չօգտագործված ներուժի նկատմամբ պետք է լուրջ մոտեցում ցուցաբերի՝ Հարավային Կովկասում անվտանգային, քաղաքական ու տնտեսական բացառիկ հնարավորություններ ձեռք բերելու նպատակով:

Այնուհետեւ Մովահեդիանը փորձում է զուգահեռներ անցկացնել Իրանի համար պոտենցիալ հենարան հանդիսացող Հայ Եկեղեցու եւ Ադրբեջանի «Հուսեյնականների» շարժման միջեւ, եւ Թեհրանին կոչ է անում՝ Ադրբեջանում գործող իսլամական շարժմանն աջակցելու հետ միաժամանակ, հովանավորել նաեւ «հակասիոնիստական» կեցվածք ունեցող հայկական եկեղեցուն, որպեսզի այդ երկու թեւերը կարողանան Հարավային Կովկասում պաշտպանել Իրանի շահերը: Հեղինակն ուրախությամբ է նշում այն փաստը, որ վերջին շրջանում «Հուսեյնականներն» Իրանում հայտնվել են կառավարող շրջանների ուշադրության կենտրոնում, եւ խորհուրդ է տալիս նույնպիսի վերաբերմունք ցուցաբերել նաեւ Հայ եկեղեցու նկատմամբ, որը, ինչպես հեղինակն է նշում, մեծապես տարբերվում է Կաթոլիկ եկեղեցուց:

Իսկ ովքե՞ր են Հայ Առաքելական եկեղեցու հետ միասին Հարավային Կովկասում Իրանին աջակցող ուժերի շարքը «համալրող» Հուսեյնականները:

Հարկ է նշել, որ Ադրբեջանում գործող շիայական կրոնական կազմակերպություններից «Հուսեյնականների» սաղմերը դրվել են 2001թ. Ադրբեջանի հարավային Յարդըմլի եւ Մասալլի շրջաններում, որի անդամները հիմնականում լինելով «Իմամ Խոմեյնիի անվան կրթաթոշակ» ստացող ուսանողներ՝ Գանձակից, Նախիջեւանից եւ հարավային շրջաններից, տարածում են այս իրանամետ շիայական կազմակերպության գաղափարախոսությունը: Կազմակերպության դրոշի տեսքը նման է Մերձավոր Արեւելքում Իրանի աջակցությունը վայելող բոլոր շիա խմբավորումների դրոշներին:

Այս առումով դժվար է պատկերացնել, որ աշխարհում առաջինը քրիստոնեություն ընդունած երկրում գործող Հայկական Եկեղեցու եւ Ադրբեջանում կիսալեգալ պայմաններում գործող կրոնական կազմակերպության միջեւ հնարավոր է զուգահեռներ անցկացնել:

Մովահեդիանը ցավով է խոսում այն մասին, որ կովկասյան տարածաշրջանի անցուդարձերի մասին թերի պատկերացումներ ունեցող իրանցի որոշ ազգայնական ուժեր թերագնահատում են Հայ Առաքելական Եկեղեցու հնարավորությունները: Սակայն նա համոզված է, որ այդ ուժերը շուտով կչեզոքացվեն:

Հոդվածի վերջում հեղինակը զգուշացնում է՝ «պարտությունը Իրանի ապագային ուղղված սպառնալիք է, քանի որ Հարավային Կովկասում իրադարձությունները շատ արագ են զարգանում, ուստի պետք է հրաժարվել անցնող երեսուն տարիներին դրսեւորած կրավորականությունից»:

# 89-րդ հայկական Թամանյան հրաձգային դիվիզիայի հաղթական քոչարին

1941թ. հունիսի 22-ին սկսվեց Խորհրդային պետության Հայրենական մեծ պատերազմը ընդդեմ ֆաշիստական Գերմանիայի:

1941թ. դեկտեմբերին Երեւանում կազմավորվեց 474-րդ հրաձգային դիվիզիան, որը 1942թ. հունվարին վերակոչվեց 89-րդ հրաձգային դիվիզիայի:

Նրա շարքերում կային ուկրաինացիներ, ռուսներ, ղազախներ եւ ուրիշ ազգություններ, սակայն մեծամասնությունը հայեր էին:

Դիվիզիայի առաջին հրամանատարն էր գնդապետ **Սեմյոն Զաքիյանը**, որին շուտով փոխարինեց փոխգնդապետ **Անդրանիկ Սարգսյանը**: Դիվիզիայի կոմիսարն էր **Վասիլի Զումակովը**, իսկ շտաբի պետը՝ փոխգնդապետ **Արտաշես Ղազարյանը**:

1942թ. հուլիսի 16-ին Երեւանի Լենինի հրապարակում (այսօր՝ Հանրապետության հրապարակ) գերագույն խորհրդի նախագահության նախագահ **Մացակ Պապյանը** դիվիզիայի զորամասերին շնորհեց ռազմական դրոշներ:

1942թ. օգոստոսի 8-11-ը դիվիզիան ընդգրկվեց Անդրկովկասյան ռազմաճակատի Հյուսիսային խմբավորման կազմի մեջ:

Դիվիզիայի զորամասերը դիրքեր զբաղեցրին Թերեքի լեռնաշղթայի մոտ եւ ստանձնեցին Գրոզնի քաղաքի պաշտպանությունը: Այստեղ՝ Թերեք գետի աջափնյա շրջանում, դիվիզիան ստացավ իր առաջին ռազմական մկրտությունը՝ անվերջ տանելով պաշտպանական մարտեր:

1942թ. սեպտեմբերի 20-ին դիվիզիան հակահարձակման անցավ եւ դաժան մարտերից հետո համալրեց 9-րդ բանակի պահեստի ուժերի կազմը:

1942թ. հոկտեմբերի 21-ին՝ իր շարքերը լրացնելուց հետո, դիվիզիան նորից վերադարձավ իր դիրքերը Գրոզնիի մոտակայքում՝ հերոսաբար հետ շպրտելով ֆաշիստական զորքերը, որից հետո դիվիզիան ուղղվեց դեպի Մալգոբեկ՝ վնասներ հասցնելով թշնամու կենդանի ուժին:

1942թ. նոյեմբերի սկզբին դիվիզիայի հրամկազմի մեջ տեղի ունեցան փոփոխություններ: Դիվիզիայի հրամանատար նշանակվեց գնդապետ **Արտաշես Վասիլյանը**, իսկ շտաբի պետ՝ **Ֆեոդոր Պոլտավեցը**: Հետագա կռվի տասն օրում ոչնչացվեցին 550 ֆաշիստ, գրավվեց մեծ թվով ռազմաավար:

Սակայն ծանր մարտերից հետո մտածելով, որ թշնամին նահանջել է եւ հեռու է գտնվում, դիվիզիայի հրամանատարությունը թույլ տված անփութության պատճառով հանկարծակիի եկավ: 1943թ. փետրվարի 10-ին՝ թեժ կրակոցներից հետո, գերմանացիները դիվիզիայի դեմ ուղարկեցին մեծաքանակ տանկեր եւ հետեւակ: Խիզախորեն կռվելուց հետո կռվի դաշտում զոհվեցին դիվիզիայի հրամանատար գնդապետ Ա. Վասիլյանը եւ 390-րդ գնդի հրամանատար **Գ. Իսախանյանը**:

Չնայած այս զոհերին, այնուամենայնիվ, փետրվարի 11-ին դիվիզիայի զորամասերն ազատագրվեցին Կուբանյան Նովոջերելիեւյան բնակատեղին:

1943թ. փետրվարի 19-ին դիվիզիայի նոր հրամանատար նշանակվեց գնդապետ (հետագայում գեներալ-մայոր) **Նվեր Սաֆարյանը**:

1943թ. օգոստոսի 24-ին 89-րդ դիզվիզիան մտավ գեներալ **Կ. Լեսելիձեի** ղեկավարած 18-րդ բանակի կազմի մեջ:

18-րդ բանակի կազմում Թամանյան թերակղզում դիվիզիան անցավ հակահարձակման եւ սեպտեմբերի 9-ից հոկտեմբերի 4-ը ջախջախեց Զիգֆրիդի Կապույտ գիծ կոչվող պաշտպանողական դիրքերը: Այս ծանր մարտերում հերոսաբար կռվեցին դիվիզիայի բոլոր մարտիկները:

1943թ. հոկտեմբերի 12-ին դիվիզիայում հյուրընկալվեց պաշտպանության ժողկոմիսարի տեղակալ մարշալ **Ս. Տիմոշենկոն**, որը բարձր գնահատեց դիվիզիայի ռազմական հաջողությունները Թամանյան թերակղզին ազատագրելու ժամանակ:

Ցուցաբերած խիզախության համար Գերագույն հրամանատար **Ստալինի** հրամանով հայկական 89-րդ դիվիզիային շնորհվեց «Թամանյան» անվանումը: Դիվիզիայի զինվորներից եւ սպաներից շատերը պարգեւատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ երեքին՝ **Հունան Ավետիսյանին, Սուրեն Առաքելյանին եւ Ջահան Կարապետյանին** շնորհվեց Խորհրդային միության հերոսի կոչում:

1943թ. դեկտեմբերի 4-ից դիվիզիայի զորամասերը մասնակցեցին Ղրիմի Կերչի թերակղզու եւ քաղաքի ազատագրման մարտերին: 1944թ.ապրիլի 11-ին Կերչն ազատագրվեց: Կերչի պաշտպանողական շրջանում թշնամուն ջախջախելու համար 1944թ. ապրիլի 24-ին դիվիզիային շնորհվեց Կարմիր աստղի շքանշան:

1944թ. ապրիլի 11-ից մայիսի 12-ը դիվիզիայի զորամասերը, գտնվելով հատուկ Ծովափնյա բանակի կազմում, ֆաշիստներից ազատագրեցին Ղրիմի թերակղզին:

Ղրիմը ֆաշիստներից ազատագրելու բարեհաջող գործողությունն ավարտելուց հետո՝ 1944թ. մայիսի 24-ին, 89-րդ հայկական Թամանյան դիվիզիային շնորհվեց Կարմիր դրոշի շքանշան, իսկ երկու գնդերը՝ 390-ը եւ 400-ը, ստացան Սեւաստոպոլյան անվանումը:

Ղրիմի ազատագրման համար դիվիզիայի հինգ զինվորներ՝ **Խ. Խաչատրյանը, Ս. Բաղդասարյանը, Ա. Հարությունյանը, Վ. Ռոստոմյանը** եւ **Հ. Մկրտչյանը** ստացան Խորհրդային Միության հերոսի կոչում:

1944թ. օգոստոսի 30-ին դիվիզիայի զորամասերն ուղղվեցին Լեհաստան:



Դիվիզիան մտավ Առաջին Բելոռուսական ռազմաճակատի 16-րդ հրաձգային կորպուսի կազմի մեջ:

Հոկտեմբերի 26-ին դիվիզիայի զորամասերը կուտակվեցին Լյուբլին քաղաքից ոչ հեռու գտնվող Կամասացիա շրջանում՝ նախապատրաստվելով անցնել Վիսլա գետը եւ գրավել ռազմահենադաշտ՝ Վարշավայից քիչ հարավ:

Սկսվեցին հայկական դիվիզիայի ամենապատմական ու հերոսական էջերը:

1945թ. հունվարի 14-ին 89-րդ դիվիզիան մասնակցեց Վիսլա գետի մոտ գտնվող Պալավինի հենադաշտի ճեղքմանը: Հետո Ռուսկի Բրոդ կոչվող բնակատեղիից հարավ դիվիզիան ոչնչացրեց 6000 զինվոր ունեցող գերմանական զորախումբը: Դրանից հետո դիվիզիայի մարտիկներն ազատագրեցին Դլուգավ եւ Կոշմիկ բնակատեղիները: Այդ մարտերում զոհվեցին դիվիզիայի հրամանատարի տեղակալ գնդապետ **Գրիգոր Բլբուլյանը** եւ 531-րդ գնդի հրամանատար փոխգնդապետ **Վասիլի Տինկին:**

1945թ. հունվարի 29-ին 89-րդ դիվիզիան կռվելով հասավ Գերմանիայի սահմանին եւ անցավ հակահարձակման:

Փետրվարի 16-ին դիվիզիայի զորամասերը տեղափոխվեցին Օդեր գետի ձախ ափը եւ դիրքավորվեցին Ֆրանկֆուրտ Օդերի վրա՝ քաղաքից հարավ: Երկու ամսից ավելի գտնվելով այս ռազմահենակետում՝ դիվիզիան 19 անգամ հետ շպրտեց թշնամու հարվածները եւ երկու ընդհանուր հարձակումները:

1945թ. ապրիլի 23-ին վեցօրյա կռվից հետո դիվիզիան գրավեց Ցեշենով քաղաքը, կռվելով շարժվեց առաջ, եւ ապրիլի 23-ին գեներալ Ն. Սաֆարյանը կորպուսի հրամանատարին հայտնեց, որ դիվիզիայի զորամսերը գրավել են Ֆրանկֆուրտ Օդերի վրա քաղաքը եւ ամրոցը:

Այդ ժամանակ դիվիզիայի հրամանատարին հրավիրեցին հեռախոսի մոտ եւ Բելոռուսական առաջին ռազմաճակատի հրամանատար մարշալ **Գ. Ժուկովը** դիվիզիայի զինվորներին շնորհակալություն հայտնեց:

Շարունակելով հետապնդել թշնամուն՝ 89-րդ դիվիզիան անցավ Բեռլինի փողոցների գրավմանը: 89-րդ հայկական Թամանյան հրաձգային դիվիզիան միակ ազգային զորամիավորումն էր, որն իր մասնակցությունն ունեցավ Բեռլինի գրավմանը:



*ՍԻՄՈՆ ԵՍԱՅԱՆ*
*Պատերազմի, աշխատանքի, զինված ուժերի եւ իրավապահ մարմինների վետերանների միության հանրապետական խորհրդի նախագահ*

1945թ. մայիսի 3-ի լույս 2-ի գիշերը 89-րդ դիվիզիայի մարտիկներն անցան Բեռլինի փողոցներով շարժվելով դեպի արեւմուտք: Բրանդենբուրգյան դարպասների մոտ դիվիզիան կանգ առավ, եւ զինվորները պարի բռնվեցին: Պարում էին «Քոչարի», «Շատախի», սասունցիների «Յարխուշտա», «Ծոփ», գյումրվա «Կալոշի պրիկեն» պարերը: Նրանց հետ էր նաեւ իրենց առասպելական հրամանատարը՝ գեներալ Նվեր Սաֆարյանը:

Մայիսի 7-8-ին Էլբա գետի մոտ 89-րդ դիվիզիայի մարտիկները հանդիպեցին դաշնակիցների հետ, իսկ մայիսի 9-ը՝ հաղթանակի օրը դիմավորեցին Վիտենբերգ քաղաքում:

1945թ. մայիսի 8-ին 89-րդ դիվիզիային շնորհվեց Կուտուզովի II կարգի շքանշան, իսկ մայոր **Հրանտ Բաբայանը** ստացավ Խորհրդային Միության հերոսի կոչում:

1945թ հունիսի 9-ին դիվիզիայի շտաբը Մոսկվայից դիվիզիան զորացրելու հրաման ստացավ: Գեներալ Ն. Սաֆարյանը գնաց Գերմանիայում խորհրդային զորքերի քաղվարչության պետի՝ հայորդի գեներալ **Ս. Գալաջեւի** մոտ՝ խնդրելու, որպեսզի թույլատրվի, որ դիվիզիան մնա խորհրդային գործող բանակի կազմում: Նա ասաց, որ դա անմիջապես Ստալինի հրամանն է: Նրանք մեկնեցին մարշալ Գ. Ժուկովի մոտ, որը նույնպես ասաց, որ դա Ստալինի հրամանն է: Գալաջեւը համարձակվեց Մոսկվա՝ Ստալինի եւ Երեւան՝ Հայաստանի կենտկոմի առաջին քարտուղար **Գ. Հարությունյանի** անուններով նամակ ուղղել դիվիզիան չլուծարելու խնդրանքով: Շուտով պատասխան եկավ, որ Ստալինը թույլատրեց չլուծարել հայկական 89-րդ Թամանյան դիվիզիան: 1945թ. ամառվա վերջին եւ աշնան սկզբին Թամանյան դիվիզիան վերադարձավ Հայաստան եւ խորհրդային բանակի շարքում մնաց մինչեւ 1956թ.:

89-րդ հայկական Թամանյան հրաձգային դիվիզիան մեկ անգամ եւս ապացուցեց, որ հայ զինվորը կայացած իրողություն է եւ ոչ թե պատմական, առասպելական հիշողություն:

Մեր ժողովրդի հերոսական էջերը պետք է ուսումնասիրել, հետազոտել եւ չմոռանալ մեր պատմությունը, ինչպես նաեւ ԽՍՀՄ ժողովուրդների միահամուռ պայքարը ֆաշիզմի դեմ Երկրորդ աշխարհամարտի տարիներին:

**ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆՑ**
**պ.գ.թ., պրոֆեսոր**

## ԿԳՄՍ-ն՝ «գլավլիտ»

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն իր ենթակայությամբ գործող կառույցներում սեփական մարդկանց է նշանակում, որ վերահսկի՝ ի՞նչ գործունեություն են իրականացնում այդ մարմինները: «**Ազգ**»-ի տեղեկություններով՝ հատկապես թատրոնների եւ համերգասրահների տնօրեններին հրահանգված է՝ կենտրոնների գործունեությունն այնպես կազմակերպել, որ այն իշխող կուսակցության՝ «Քաղաքացիական պայմանագրի» քիմքին հաճելի լինի:

«Դա վերաբերում է նաեւ բովանդակությանը. մի քանի թատրոնների խաղացանկերից որոշ ներկայացումներ հանել են: Տնօրենները գեղարվեստական ղեկավարներին ասել են, թե դրանք քաղաքական ենթատեքստ ունեն: Գեղղեկերից մեկն, օրինակ, ընդդիմացել է, ի պատասխան տնօրենը հասկացրել է, որ ավելորդ գլխացավանք չեն ուզում ստեղծել»,- նշեց մեր զրուցակիցը:

Խոսքի ազատության մասին ճամարտակող իշխանությունը, փաստորեն, անցել է խորհրդային ժամանակների կարգուկանոնով գործելուն՝ գրաքննությանը, երբ այս կամ այն հոդվածն ու գիրքը տպելուց առաջ այն նախ պետք է «գլավլիտի» մկրատող գրչի տակով անցներ:

«**Ազգ**»-ի ձեռքի տակ կան նաեւ այն հաստատությունների եւ տնօրենների անունները, որոնք արգելել են ներկայացում կամ մշակութային այլ միջոցառում բեմադրել, ցուցադրել՝ դա պատճառաբանելով քաղաքական ենթատեքստով: Հարկ եղած դեպքում կհրապարակենք կոնկրետ անուններ:

**ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# «Եթե մի քիչ անձրեւ լիներ, ես կծաղկեի...»: Գեղանկարիչ Խաչիկ Հարությունյանի հիշատակին



Խաչիկ Հարությունը կյանքից հեռացավ՝ մինչեւ վերջ ձեռքին պահելով մեկ վրձինը, մեկ բահը: Հաճախ էր համացանցում ներկայացնում իր «ձեւապատկերներ»-աբստրահարումները, գրաֆիկական թերթերը, իսկ դիմանկարները, շատերի գնահատմամբ, արվեստի բարձր դրսեւորումներ էին՝ թե՛ կատարման վարպետությամբ եւ թե՛ հոգեբանական գեղանկարչական բնորոշումներով, բնորդի ներաշխարհի, մտածումի, տրամադրության գաղտնիության բացահայտումներով: Աշխատում էր արագ, կարճ ընթացքում վրձնելով կամ մատիտանկարելով այնպիսի դիմանկարներ, որոնք ցուցահանդեսների լավագույն գործերի շարքն էին դասվում: Մարդու հոգեաշխարհն աննկատ ներթափանցելու եւ դիտողականության շնորհը, թերեւս, եկել էր գեղանկարչի տարիների փորձառությունից, բայց դրա համար նաեւ բնածին նուրբ զգացողություն է պետք ունենալ: Եվ բնությունը շռայլ էր եղել իր հանդեպ՝ իր հսկա մարմնի մեջ դնելով մարդու հոգին կարդալու նրբությունը:

Գեղարվեստական կրթությունը ստացել էր Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, կարճ ընթացք դասավանդել էր Ծովագյուղի միջնակարգ դպրոցում, ապա եղել Սեւանի քաղաքային կուլտուրայի բաժնի ժող. թատրոնի բեմադրող նկարիչ: 1977-82 թ.թ. Երեւանի Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի նկարիչ- դեկորատորը լինելով՝ մասնակցել էր մի շարք օպերային եւ բալետային ներկայացումների («Դավիթ Բեկ»-ի, «Նորմա»-յի, «Տոսկա»-յի, «Դոն Ժուան»-ի, «Գայանե»-ի, «Անուշ»-ի եւ այլն) ձեւավորման աշխատանքներին: Երիտասարդական պալատի գլխավոր նկարիչ, Մարզահամերգային համալիրի գլխավոր նկարիչ, Էդվարդ Արծրունյանի համահեղինակությամբ Գետահովիտ գյուղի հանգստյան տան «Հայաստան» որմնանկարի ստեղծող, «Բանաստեղծություններ եւ նոթեր» գիրք-ալ-



*«Գուշակը».*
*հեղինակ՝ Խաչիկ Հարությունյան*

բոմի եւ սեփական գեղանկարչական աշխատանքների երեք ալբոմների, տասնյակից ավելի մոնումենտալ աշխատանքերի հեղինակ, ՀՀ եւ ՌԴ նկարիչների միությունների անդամ,- սա իր անցած ուղու խիստ համառոտ նկարագրությունն է: 2014 թվականին «Հայաստան» որմնանկարը հաստատվել է ՀՀ պատմամշակութային արժեքների ցանկում: Նրա բազմաթիվ աշխատանքներ պահպանվում են ՀՀ մշակույթի նախարարությունում եւ գեղարվեստական ֆոնդերում: Շատ գործեր գտնվում են անհատական հավաքածուներում, Ռուսաստանում, Գերմանիայում, Բելգիայում, Հոլանդիայում, Ֆրանսիայում, Լեհաստանում, ԱՄՆ-ում, այլուր:

Խ. Հարությունյանի բազմաթիվ «ձեւապատկերները»՝ թղթի վրա թանաքանկարները, գրչանկարները, յուղաներկ գործերը գունակոմպոզիցիոն երեւակայական պատկերներ են՝ երանգների համաչափության ճշգրիտ բաշխումներով եւ հազարումի ձեւերի հայտնություններով: Դրանք դիտողին տրամադրություն են հուշում եւ մեկնության ազատություն տալիս: Այդ մեկնությունների բանաստեղծական ձեւակերպումներից են նկարչի «Հոսող տրամադրություն» յուղաներկ կտավի տպավորությամբ տարիներ առաջ գրված տողերս.

*Սիլուետ անձրեւներ՝ մարմիններ անկաշկանդ՝*
*Ցերեկվա անձկալի սպասման մաղոցներ,*
*Շղարշված մերկություն ու ձեւեր կանացի՝*
*Վարդագույն ու դեղին հոսանքներ յուղաներկ:*
*Առագաստ եւ քամի եւ ցայտող թռիչքներ,*
*Մեղմորեն մաղմղող անշոշափ կաթիլներ,*
*Ցերեկվա անհաղորդ լռության արձագանք՝*
*Չթխպած երկնքի անձրեւներ սիլուետ...*




*Գրաֆիկական թերթ՝ Խաչիկ Հարությունյանի բանաստեղծությամբ*

Վերջին 9-10 տարիներին Խաչիկ Հարությունյանը թողել էր երեւանյան իր արվեստանոցը եւ հաստատվել Արմավիրի մարզի մի գյուղական բնակավայրում՝ առանձնության մեջ ստեղծագործելու եւ հողին ու բնությանն առավել մոտ լինելու համար: Գոհություն կար նրանից, որ իր հողն է մշակում, իր ծառերի ծաղկումն է տեսնում եւ նկարում է սրտի ուզած չափ:

Ընդամենը յոթ ամիս առաջ էր, որ Հայաստանի նկարիչների միության մեծ սրահում բացվեց իր հոբելյանական ցուցահանդեսը: Նրանում ամբողջացված ներկայացված էր նկարչի տարբեր տարիների ստեղծագործությունների ընտրանին՝ գեղանկարչական գործեր, աբստրահարումներ, դիմանկարներ, թեմատիկ կոմպոզիցիաներ, գրաֆիկական թերթեր: Երկար չեմ ու կամի մեջ էր եղել՝ 2023-ի անհանգիստ օրերին բացե՞լ իր 70-ամյակի առիթով նախատեսված ցուցադրությունը, թե՞ ոչ: Հայ ազգի համար այդ դժնդակ, ծանր օրերին չհուսաբեկվելու, ստեղծագործելու, ապրելու ուղղակի հուշում-կոչ էր նրա ցուցահանդեսը: Ինձն էլ ցուցահանդեսի բացմանը հիշեց Երկրորդ համաշխարհային պատերազմին շրջափակված, սովահար, արյունաքամ լինող, բայց պայքարող Լենինգրադում Շոստակովիչի 7-րդ՝ «Լենինգրադյան» սիմֆոնիան գրելու եւ հնչեցնելու փաստը, որ ապրելու եւ ապրեցնելու համար էր արարված: Իսկ ես, իր խոսքին համահավասար հիշեցի նույն տարիներին Դերենիկ Դեմիրճյանի գրած «Վարդանանք» վեպը, որ ոչ միայն բարձր գրական արժեք ուներ, այլ նաեւ բացահայտում էր մեր ազգի գոյատեւման գաղտնիքը, պարունակում անցյալի գնահատականներ եւ տալիս հուշումներ հետագայի համար: Արվեստագետն իր գրչով, վրձնով, երաժշտությամբ է պայքարում, թշնամու դեմ կռիվ տալիս ազգի «ես»-ի անունից: Այդ ցուցահանդեսը հատկապես ներկա ժամանակներում այդ աննկուն ոգու արտահայտությունն էր: Ինչպես Խաչիկ Հարությունյանն էր ասում՝ «Եթե մի քիչ անձրեւ լիներ, ես կծաղկեի...»:



*Կոմիտաս.*
*հեղինակ՝ Խաչիկ Հարությունյան*

# «Գյումրի եւ ավելին»



Մեր ժամանակների ճանաչված արվեստագետներից է գեղագետ, արվեստաբան-գծանկարիչ, ԵՊՀ դոցենտ **Լեւոն Լաճիկյանը**: Ծնվել է Գյումրիում՝ նկարիչների ընտանիքում: Նկարել է հայրը, նկարում է ավագ եղբայրը՝ ՀՀ վաստակավոր նկարիչ **Սամվել Լաճիկյանը**: Նրա գիտական ու արվեստաբանական հոդվածները տպագրվել են հայագիտական նշանավոր հանդեսներում ու հանրագիտարաններում, լույս տեսել առանձին գրքերով՝ Երեւանում ու Նյու Յորքում:

Արդեն մի քանի տասնամյակ նա իր գրիչն ու ջանքերը ծառայեցնում է նաեւ ժամանակակից հայ մշակութային կյանքի լուսաբանման կարեւոր գործին: Ավելին՝ նաեւ մասնակիցն է գրական-մշակութային այդ ընթացքի՝ Հայաստանի ու Սփյուռքի մամուլում եւ հատկապես «**Ազգ**» թերթում տպագրած իր բազմաթիվ հրապարակումներով, վերջին տարիներին՝ նաեւ գծանկարներով: Արվեստաբանությունից սահուն անցում կատարելով դեպի նկարչություն՝ Լեւոն Լաճիկյանն արդեն ստեղծել է քաղաքային տեսարանների տպավորիչ նկարաշարեր՝ արժանիորեն ձեռք բերելով «քաղաքերգակ» նկարչի համբավ:

Օրերս «Թեքեյան» կենտրոնում բացվեց Լեւոն Լաճիկյանի «Գյումրի եւ ավելին» խորագրով ցուցահանդեսը՝ թվով 18-րդը արվեստագետի ստեղծագործական կենսագրության մեջ: Ներկայացված են շուրջ 7 տասնյակ գծանկարներ, որոնց առանցքը կազմում է Լաճիկյանի Գյումրիապատումը: Նա նուրբ գծերով եւ զուսպ գուներանգներով է իր սերը փոխանցում առհավական ծննդավայրը: Մեր զրույցի ընթացքում նկարիչը խոստովանեց, որ ինքը մտովի կատարյալ է տեսնում Գյումրին եւ ուզում է բոլորին ի ցույց դնել նրա ազնվական դիմագիծը:

Ցուցահանդեսում գյումրիապատումի կողքին ներկայացված են նաեւ քաղաքային տեսարաններ Փարիզից, Մարսելից, Վենետիկից, Պրահայից եւ այլ գեղեցկագույն քաղաքներից, որտեղ գործի բերումով եղել է արվեստաբան-գծանկարիչը:

«Գյումրի եւ ավելին» ցուցահանդեսի մաս է կազմում նաեւ Լաճիկյանի գրաֆիկական եկեղեցապատումը: Արվեստասերին ներկայացված են եկեղեցիներ ու վանքեր Հայաստանից, Արցախ աշխարհից եւ արտերկրից: Այստեղ կարելի է տեսնել թե՛ Սինգապուրի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցին եւ թե՛ Ոսկեպարի Սուրբ Աստվածածինը: Հուզիչ է, իհարկե, այս վերջին գծանկարը, որտեղ 7-րդ դարի հայկական պաշտամունքային կառույցը գծանկարված է մի տեսակ մեկուսի ու տխուր գուներանգներով...



Դիտարժան այս ցուցահանդեսը բաց է լինելու մինչեւ մայիսի 7-ը:

ՀՐԱՉՅԱ ԲԱԼՈՅԱՆ (Արմենյան)

# Եթովպիական ընդգրկում ցուցահանդես (նաեւ հայկական ցուցանմուշներով) Մասաչուսեթսում

*Հայ-եթովպիական հարաբերությունները դարերի պատմություն ունեն: Երկու ժողովուրդներն էլ դավանում են քրիստոնեության միեւնույն ուսմունքը: Ոմանք նույնիսկ նմանություններ են գտնում եթովպիական եւ հայկական այբուբենների միջեւ: Այս կապը հիշեցնող եւ ամրապնդող օղակ է հանդիսացել «Եթովպիան խաչմերուկում» խորագրով ընդարձակ ցուցահանդեսը՝ բացված անցյալ դեկտեմբերին Բալտիմորի «Ուոլտըրզ» պատկերասրահում, որն այժմ, ապրիլի 12-ից փոխադրվել է Սալեմի (Մասաչուսեթս) «Պիբոդի Էսսեքս» թանգարան (PEM) եւ գործելու է մինչեւ հուլիս, որից հետո՝ օգոստոս-նոյեմբեր ամիսներին բաց է լինելու Օհայոյի «Տոլեդո» պատկերասրահում: Այս մասին «Միռըր-Սփեքթեյթր» շաբաթաթերթում գրում է խմբագրի տեղակալ Արամ Արքունը, որի հոդվածից քաղում ենք հետեւյալ տեղեկությունները:*

«Ուոլտըրզ» եւ «Տոլեդո» պատկերասրահների համագործակցությամբ կազմակերպված այս շրջիկ ցուցահանդեսում համընդհանուր ցուցադրության են դրված մոտ երկուհազարամյա եթովպիական մշակույթի 200-ից ավելի նմուշներ՝ սրբապատկերներ, քանդակներ, մանածագործվածքներ, մետաղադրամներ, խաչեր, որոնց թվում նաեւ նկատելի են հայկական նկարազարդ ձեռագրեր եւ արվեստի այլ գործեր: Բացման օրը, ապրիլի 22-ին, կուրատորական աշխատանքների տնօրեն **Պետրա Սլինկարդը** նշել է, որ մոտ 12 հազար եթովպիացիներ ապրում են Մեծն Բոստոնի տա-









րածքում: Իսկ PEM-ի ցուցահանդեսի համակարգող **Քարեն Քրեյմըրը** խոսել է եթովպիական հարուստ արվեստի ժառանգության մասին, նշելով, որ Եթովպիան աֆրիկյան միակ պետությունն է եղել, որ մերժելով գաղութարարությունը, պահպանել է իր անկախությունը: Եթովպիայում են ապրում ավելի քան 80 էթնիկական խմբավորումներ, որոնք դավանում են քրիստոնեականություն, հրեականություն եւ մահմեդականություն:

Ցուցահանդեսի «Հանդիպումներ» բաժնում եթովպիականի կողքին համեմատական ցուցադրության են դրված հայկական աստվածաշնչյան թեմաներով գունազարդված ձեռագրեր, որոնցում նկատելի են նախշանկարների եւ կենդանիների նմանությունները, իսկ խաչը երկու մշակույթներում էլ կենտրոնական տեղ է գրավում: Մի մեծ պլակատ վկայում է այն մասին, որ Հայաստանը քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած առաջին պետությունն է եղել, իսկ Եթովպիան՝ երկրորդը: Նույն պլակատը հակիրճ ակնարկում է նաեւ, որ հայ առեւտրականները Եթովպիան ընդգրկել են իրենց առեւտրային ճանապարհորդությունների ցուցակում:

Հայկական բաժնում ցուցադրված են նաեւ Վասպուրականից դուրս բերված 14-րդ դարի Ավետարանի մի էջ եւ Պետրոս Ծաղկողի գունավոր մի մանրանկար, որոնք համեմատվում են եթովպիական 16-րդ դարի երեք սրբապատկերների հետ: Համեմատություններ կան նաեւ այլ՝ բյուզանդական, իտալական մշակույթների հետ: Հատկանշական է, սակայն, այս ընդգրկուն ցուցահանդեսում հայկական ազդեցության մասնանշումը:

Հայկական ցուցանմուշներ կան նաեւ այլ բաժիններում: Հմայիլներ, թալիսմաններ, գալարված մասյաններ կամ մագաղաթներ, որոնք առնչվում են բժշկության եւ Աստվածային պաշտպանության հետ: Ժամանակակից աշխատանքների բաժնում յուղաներկ մի կտավ «Սկունդեր» (Ալեքսանդր) Պողոսյանի ձեռամբ վերնագրված է «Սկզբի վերջը»: 1972-73 թվերին կատարված այդ ստեղծագործության հեղինակի հայրը հայ է, մայրը՝ եթովպիացի: Ծնվել է Ադիս Աբեբայում: Կտավը նկարել է Վաշինգտոն տեղափոխվելուց հետո, որտեղ սեւամորթ նկարիչներին է դասավանդել (1972-2001 թթ.) Հովարդ համալսարանում: Կտավը, որը Սմիթսոնյան ինստիտուտի «Աֆրիկյան արվեստի ազգային թանգարանն» է տրամադրել ցուցահանդեսին, պատկերում է Եթովպիայի 1970-ականների քաղաքական պայքարը, որի հետեւանքով առաջացավ արդի եթովպիական սփյուռքը:

Ըստ **Լիդիա Պիբոդիի**, «Ուոլտերզում» կազմակերպված ցուցահանդես են այցելել 19.208 հոգի 12 շաբաթվա ընթացքում: Նա հույս է հայտնել, որ PEM-ի ցուցահանդեսը կգերազանցի այդ ցուցանիշը, իսկ «Տոլեդոյինը» շատ ավելի մարդաշատ կլինի, քանի որ տարածքը ավելի ընդարձակ է եւ հնարավորությունները ավելի մեծ:

Ցուցահանդեսի առթիվ Յեյլ համալսարանի հրատարակչության կողմից լույս է ընծայվել **Քրիստին Շիակկայի** խմբագրությամբ գեղեցիկ մի ալբոմ՝ հարյուրավոր լուսանկարներով:

Պատրաստեց՝ ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
The Armnenian Mirror-Spectator

⇨1 Առավոտյան ստուգեցի դաշնության պաշտոնյաների, քաղաքական գործիչների սոցցանցային գրառումները: Անցյալ տարվա լռությունն էր. Միայն Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնախմբի նախագահ **Միշայել Ռոթն** էր գրառում արել X-ի հարթակում (հաջորդող օրերին մի քանիսն էլ մի տող գրեցին):

# Ապրիլի 24-ի Ուրացման շաբաթը

Ապրիլի 24-ին նախորդող եւ հաջորդող օրերին Գերմանիայի տարբեր քաղաքներում գերմանահայ համայնքը հիշատակի երեկոներ, ոգեկոչման արարողություններ է կազմակերպում: Այս տարի էլ հիշողության ավանդույթը շարունակվեց: Սակայն նկատելի է, որ տարբեր քաղաքներում գերմանացի հրավիրյալ բանախոսները տեղական կառավարման մարմինների ցածրակարգ պաշտոնյաներ են, որ հաճախ նախորդ տարիներին գրած ելույթի պատրաստի տեքստն են կարդում... էլ ունկնդրել չի լինում...«Այլեւս երբեք-ը հիմա է» նախադասությունն էլ թե՛ իրեններին, թե՛ հայերին են ուղղում, հետո հավելում ժողովրդավարության աղը՝ ինքնանպաստության մի քանի բյուրեղ, թե «դժբախտաբար ԼՂ-ի շրջափակման, այնուհետ հայերի արտաքսման հարցին մեդիան նվազ ուշադրություն է հատկացրել»... ու փորձում ազատագրել իրենց, արդարացնել իրենց լռությունը: Պաշտոնյային մեդիա՞ն է շարժում: Ուրեմն Ադրբեջանի մասին մարտի 6-ին գերմանական ARD-ի հեռասփռած «Անդունդի եզրին» հետաքննական ֆիլմը, որ ցուցադրվել է ամենադիտարժան ժամին՝ 20.15-ին, դրանից առաջ եւ հետո նաեւ գերմանական Բունդեսթագում, ինչո՞ւ գոնե բարոյապես չի ճնշել այնքան, որ սոցիալ-դեմոկրատ պատգամավոր **Ֆրանկ Շվաբեին** «Ադրբեջանի պետության թշնամի» որակած **Ալիեւին** ապրիլի 26-ին Շվաբեի կուսակից կանցլերը չհյուրընկալի Բեռլինում:

Կռահելի չէ՞, որ Գերմանիայի ուրացման երկրորդ խորհրդանիշը դաշնային կանցլերն է՝ **Օլաֆ Շոլցը**: 2020-ի պատերազմից հետո, Արցախի շրջափակման, հայության բռնագաղթի, Հայաստանի վրա հարձակման, ՀՀ 200 քմը բռնազավթած, հայ գերյալներին Բաքվի բանտում անարգող, ՀՀ-ն Արեւմտյան Ադրբեջան սահմանող Ալիեւի արյունոտ ձեռքը Շոլցը սեղմում է, ուրեմն փոխանցում նաեւ, թե արդարացնում է ագրեսիան, հայերին



«շների նման հալածելու» Բաքվի ֆաշիստի հետեւողական քաղաքականությունը...իմ դեմ փակ դուռ չկա, հոխորտում է Ալիեւը:

Ապրիլի 24-ին Մայնի Ֆրանկֆուրտի սուրբ Պողոսի տաճարում ժամը 19.15-ին հրավիրված հիշատակի գլխավոր երեկոյին գլխավոր բանախոս **Լուիս Մորենո Օքամփոն** բացեց մի դուռ, որ Գերմանիան ճանաչում է...Նյուրնբերգից:

Եւ երբ մասնագիտությամբ իրավաբան կանցլեր Շոլցը ապրիլի 26-ին սեղմում էր Ալիեւի ձեռքը, իսկ մասնագիտությամբ իրավաբան Կանաչների կուսակցության ներկայացուցիչ ԳԴՀ արտգործնախարար **Աննալենա Բերբոքը** (երրորդ ուրացողը) նույն օրը Ալիեւին ողջունելով հայտարարում, թե « COP29 -ը Բաքվում անցկացնելը դիտարկում է որպես Հարավային Կովկասում լավ ապագայի հնարավորություն», տեղյակ էին, որ սուրբ Պողոսի տաճարում հնչել է նախազգուշացումը՝ « 109 տարի հետո, Հոլոքոսթից եւ 1948-ի Ցեղասպանության կոնվենցիայից հետո, Գերմանիայի կառավարությունը, որպես կոնվենցիան ճանաչած կողմ, իրավական պարտականություն ունի կանխելու ցեղասպանությունը: ԼՂ հայերին անվտանգ վերադարձի երաշխիք պիտի տրվի, իսկ նրանց բանտված առաջնորդներին՝ ազատարձակում Բաքվի բանտից», ինչպես իր ելույթում զգուշացրեց Հաագայի Արդարադատության միջազգային դատարանի նախկին գլխավոր դատախազ Մորենո Օքամփոն:

«Ալիեւին եւ Ադրբեջանին Գերմանիայի հատկացրած ցանկացած օգնություն կարող է դիտվել՝ որպես ցեղասպանության մեղսակցություն», ասաց Մորենո Օքամփոն:

Նրա այդ օրվա ճառը մի բանալի է, որ դուռ է բացում՝ արդարության հույսի: Եւ ոչ միայն՝ նաեւ արդարադատության հաստատման, որ մեզանից հավաքական, տեւական ջանք է պահանջում:

Մարդու իրավունքների միջազգային ընկերակցությունը ցեղասպան Ալիեւի դեմ հայց է ներկայացրել ՄՔԴ:

Կանդրադառնանք:

# Ազգային Ակադեմիան պետք է պահպանվի, զարգացվի ու ծառայեցվի երկրի զարգացմանը

2024թ. ապրիլի 23-ին ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը մեկնարկեց ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության բակում բացված «Գիտություն» ցուցահանդեսով, որին ներկայացված են ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունները, ՀՀ պետական խոշոր ԲՈՒՀ-երը եւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն ու ԳԱԱ գործընկերները:

ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս **Աշոտ Սաղյանը** ողջունեց ժողովի մասնակիցներին` 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԳԱԱ համակարգում աշխատում է 3522 մարդ, այդ թվում` 2239-ը գիտաշխատող, որոնցից 277-ն ունեն գիտությունների դոկտորի, 1028-ը` թեկնածուի գիտական աստիճան: ԳԱԱ կազմակերպություններում ներկայում սովորում է 68 ասպիրանտ:

Ներկայացնելով 2023 թվականի գիտական գործունեության հիմնական արդյունքները` ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց. «Հաշվետու տարում մեր հիմնական առաքելությունը պետք է լիներ Գիտությունների ազգային ակադեմիայի նոր կանոնադրության ընդունումը եւ դրա հիման վրա ակադեմիայի նախագահությունում եւ համակարգում բարեփոխումների իրականացումը: Սակայն դա կապված էր «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» նոր օրենքի ընդունման կամ «Գիտությունների ազգային ակադեմիայի մասին» գործող օրենքում որոշ փոփոխություններ կատարելու հետ, ինչը, ցավոք, տեղի չի ունեցել, թեպետ դրա համար ակադեմիայի ղեկավարությունն իր լիազորությունների շրջանակներում արել է ամեն ինչ»: ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ 2023 թվականին տպագրվել է 1528 հոդված գրախոսվող ամսագրերում, որից 670-ն` արտասահմանում, 171 մենագրություն եւ ժողովածու, որից 19-ն` արտասահմանում: Ընդհանուր առմամբ, 2022 թվականի համեմատ 2023 թվականին նկատվում է հրապարակումների 3-5% աճ:



Խոսելով ՀՀ ԳԱԱ ֆինանսավորման մասին` Ա. Սաղյանը նշեց, որ ԳԱԱ բյուջետային եւ արտաբյուջետային ընդհանուր ֆինանսավորումը 2023 թվականին կազմել է 15 միլիարդ 445 միլիոն դրամ, ինչը 2022 թվականի համեմատ նվազել է մոտ 10%-ով: «ԳԱԱ ֆինանսավորման ընդհանուր ծավալները 2019-2023 թվականներին աճել են 54%-ով, ընդ որում, բյուջետային ֆինանսավորման ծավալներն աճել են 65%»,- ասաց Աշոտ Սաղյանը: 2023 թվականին իրականացվել է 45 բազային ֆինանսավորման ծրագիր, 6 նպատակային ֆինանսավորման ծրագիր, 292 Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի դրամաշնորհային թեմատիկ ծրագիր, 192 տնտեսական պայմանագրային ծրագիր: 2023 թվականին ԳԱԱ ինստիտուտների կողմից կազմակերպվել են 72 միջազգային գիտաժողով, սիմպոզիում եւ այլ միջոցառումներ: Իրականացման ընթացքում են 77 միջազգային դրամաշնորհային ծրագրեր, այդ թվում` «Հորիզոն Եվրոպա» ծրագրի եւ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի 5-ական նախագծեր:

2023 թվականին ԳԱԱ-ն շարունակել է միջազգային համագործակցությունն արտասահմանյան գիտական կառույցների եւ գիտությունների ակադեմիաների հետ: Ստորագրվել են գիտական համագործակցության պայմանագրեր Չեռնոգորիայի, Մոլդովայի, Իրանի, Չինաստանի գիտությունների ակադեմիաների հետ: 2024 թվականին ստորագրվել են պայմանագրեր

Արդեն 10-րդ տարին է, ակադեմիայի անդամների եւ թղթակից անդամների ընտրություններ չեն անցկացվում, դրա պատճառով ակադեմիայի անդամների թիվը երկու անգամ նվազել է, իսկ միջին տարիքը 79.1տ է: Որեւէ այլ երկրի ակադեմիայում նման բան չկա, բոլորն էլ ընդունված կարգով իրականացնում են ընտրություններ եւ պարբերաբար թարմացնում են համակարգը: Այս ճանապարհով ակադեմիան տարվում է դեպի սպառում: Հարց, արդյո՞ք դա է մեզ պետք: Իմ կարծիքով` ոչ, համոզված եմ` դուք էլ եք այդպես մտածում: 80 տարվա պատմություն ունեցող համակարգը պետք է պահպանվի, զարգացվի եւ ծառայեցվի երկրի զարգացմանն ու բարգավաճմանը»,- ասաց Ա. Սաղյանը:

Ելույթներին հաջորդեց ՀՀ ԳԱԱ մրցանակների հանձնման արարողությունը:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ

# Ապրիլքսանչորսյան արձագանքներից

## *«Փաշինյանը կոչ արեց դադարեցնել կորսված հայրենիքի որոնումները»*

Ապրիլի 24-ին ռուսական «**Ինտերֆաքս**» գործակալությունն այսպիսի վերնագրով հրապարակմամբ է հանդես եկել` արձագանքելով Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա առթիվ ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** հայտարարություններին: Անդրադարձ է կատարվել մասնավորապես նրա այն հայտարարությանը, թե մեծամասշտաբ ողբերգությունը տեղի է ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, ինչը, մեր կողմից նկատենք, ասում են թուրքերը, երբ ուզում են արդարացնել իրենց` ժխտելով ցեղասպանության իրողությունը: Հոդվածում զուգահեռաբար բերվում է հիշատակի օրվա նախօրեին Թուրքիայի նախագահ **Էրդողանի** ասած այն խոսքը, թե Հարավային Կովկասում նոր կարգ է հաստատվում, եկել է ժամանակը ներկա իրողություններով գործելու եւ մի կողմ գցելու «անհիմն հիշողությունները»:



Փաշինյանը, նկատում է հրատարակությունը, դարձավ Հայաստանի առաջին ղեկավարը, որը «ցեղասպանություն» եզրույթի կողքին գործածեց «մեծ եղեռն» արտահայտությունը:

Լրատվամիջոցները բերում են Հայաստանի նախկին նախագահ **Սերժ Սարգսյանի** հայտարարությունը` այսօր էլ պատերազմի սպառնալիքով եւ զանազան ճնշումներով Հայաստանի ու հայ ժողովրդի հաշվին հնարավորինս շուտ իրենց ուզածը ստանալու Թուրքիայի եւ Ադրբեջանի ձգտումների մասին: Ինչպես եւ այն մասին, որ անօրինական կերպով ճանաչելով Արցախն Ադրբեջանի մաս, Հայաստանը կառավարողներն այժմ փորձում են մոռացության մատնել Հայոց ցեղասպանությունը, պատմական արդարության եւ սեփական իրավունքների վերականգնման համար հայ ժողովրդի պայքարը բնորոշելով իբրեւ պետությանը սպառնալիք:

«Կալենդար սոբիտի» («Իրադարձությունների օրացույց») կայքը, իր ընթերցողներին տեղեկացնելով Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականին սկսված եւ տարիներ շարունակված զանգվածային ջարդերի մասին` նշում է, որ ցեղասպանությունը կազմակերպվել էր Թուրքիայի կառավարողների կողմից, կայսերական Գերմանիայի աջակցությամբ եւ արեւմտյան երկրների թողտվությամբ: Դավանելով հետադեմ պանթուրքիզմի եւ պանիսլամիզմի գաղափարները, ավելացնում է հրատարակությունը, թուրքական իշխանությունները ձգտում էին ոչ միայն պահպանել Օսմանյան կայսրությունն ու բռնի կերպով ոչնչացնել կամ ձուլել հպատակ բնակչությանը, այլեւ ստեղծել համաթուրանական կայսրություն, որը կներառի բոլոր մահմեդականներին:

«**ՌԻԱ նովոստի**» գործակալությունը, վկայակոչելով Երեւանում Ռուսաստանի դեսպանության սգակցական գրառումը օրվա առթիվ, հիշատակում է նաեւ 1915-1922 թվականներին իր պատմական հայրենիքում` Արեւմտյան Հայաստանում հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին ՌԴ Պետդումայի 1995 թվականի հայտարարությունը:

«**Պառլամենտսկայա գազետա**»-ն էլ փաստում է, որ մի քանի տարի շարունակված ցեղասպանության զոհերի թիվն ըստ տարբեր աղբյուրների գնահատվում է 200 հազարից մինչեւ 2 մլն, իսկ 800 հազարն էլ դարձել են գաղթական: Ինչպես եւ հիշեցվում է, որ 2015 թվականին Եվրոպական խորհրդարանն ապրիլի 24-ը հայտարարել է Օսմանյան Թուրքիայում 2015 թվականի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր:**(*)**

ՌԴ Լիպեցկի մարզի «**Վեստի Լիպեցկ**» կայքն անդրադարձել է տեղի հայերի կազմակերպած հիշատակի հանդիսությանը:

Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա առթիվ հայ ժողովրդին է դիմել Աբխազիայի նախագահ **Ասլան Բժանիան**: Նա, «Սպուտնիկ Աբխազիա»-ի տեղեկացմամբ, նաեւ գնահատելով ցեղասպանությունից փրկված ու իր երկրում ապաստան գտած հայերի սերունդների ավանդը երկրի զարգացման գործում, մեր ժողովրդին մաղթել է ոգու ամրություն, խաղաղություն եւ բարգավաճում:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

**) Սխալ է ռուսական թերթի այս պնդումը. Ապրիլի 24-ը որպես սգո խորհրդանշական օր հայրապետական հատուկ կոնդակով սահմանել է Ամենայն հայոց հայրապետ Գեւորգ Ե Սուրենյանցը, նկատի ունենալով արեւմտահայ մտավորականության ձերբակալության թվականը: **Խմբ.:***

# Լեգիտիմ հարց

1 Ասենք` Արծվաշենը մերն է, այո, բայց վերադարձնելու դեպքում անգամ հազիվ թե հայերը գնան ապրելու ադրբեջանցիներով շրջապատված այդ անկլավում: Ուրեմն եւ կարելի է բանակցել առ այն, որ ադրբեջանցիների պահանջած-մեզ համար կենսական շատ տարածքների փոխարեն Արծվաշենը մնա որպես ադրբեջանական տարածք, միաժամանակ մեզ վերադարձվեն, կամ չհանձնվեն մեր այն տարածքները, որոնք կենսականորեն մեզ անհրաժեշտ են, բնակեցված են, կամ մեր գյուղերի արտուանտառն են;

Երբ այդպիսի փաթեթ լինի, երբ այդպիսի ընդհանրական համաձայնություններ ձեռք բերվեն, դրանք քննարկման դրվեն Ազգային ժողովում, հավանություն ստանան, դրանից հետո միայն սկսվի սահմանազատում եւ սահմանագծում:

Թե չէ դրել` մի տեղից գծում, կտրում- տալիս եք ադրբեջանցուն, սա էլ գալու- նստելու է, դրանից հետո ո՞վ է տերը, կարո՞ղ եք Հայաստանն Արեւմտյան Ադրբեջան անվանող, դպրոցներում «Արեւմտյան Ադրբեջան» վերադարձի մասին շարադրություն գրել պատվիրող ագրեսորին զսպել դատարկ խոսքով կամ «լեգիտիմ սահմաններ» ասել-լսեցնելով: Ո՞վ է դրա երաշխավորը, Արցախը դատարկելուն լուռումունջ նայած Եվրոպա՞ն ու ԱՄՆ-ը՞: Էս լուրջ ե՞ք ասում:

Հարցն առավել քան լեգիտիմ է, հարցը պատասխան է պահանջում, շատ հստակ պատասխան, ու ոչ թե մոլորեցնող-խուսանավող, ու այս պահին ով էլ բողոքի Տավուշի սահմանի չափուձեւի դեմ` դա է լեգիտիմ:

# Հայազգի աստղերը կրկին փայլեցին Լոնդոնի Արքայական Օպերայում

ՀԱՍՄԻԿ ՍԵՅՄՈՐ

**Լոնդոն**

Յուրաքանչյուր հայազգի արվեստագետի միջազգային ելույթ ոչ միայն անհատական մեծ նվաճում է, այլեւ ազգային մշակույթի հաղթանակ: Բացառություն չէր այս գարուն Լոնդոնի Քովենթ Գարդենի Արքայական օպերայում հայազգի երկու սոպրանոների՝ **Հասմիկ Գրիգորյանի** եւ **Հրաչուհի Բասենցի** իրարահաջորդ ելույթները կանացի գլխավոր դերում՝ Ջակոմո Պուչինիի «Մադամ Բաթերֆլայ» օպերայում:

Լոնդոնում դիտելով Ջոն Լոնգի պատմվածքի հիման վրա թատերական բեմադրությունը՝ Պուչինին ներշնչվեց գրելու «Մադամ Բաթերֆլայ» երկու գործողությամբ օպերան: Օպերայի իտալերեն լիբրետտոն գրել են Ջուզեպե Ջակոզան եւ Լուիջի Իլիկան, այն ունեցել է հինգ վերամշակում, վերջինը՝ 1907-ին, որն ամենահաջողված եւ ամենահաճախ բեմադրվող տարբերակն է: Օպերայի առաջնախաղը կայացել էր Միլանի «Լա Սկալա» թատրոնում՝ 1904 թ. փետրվարի 17-ին եւ ընդամենը մեկ տարի անց՝ 1905 թ., Պուչինիի նորընծա օպերան բեմադրվել է Քովենթ Գարդենի Արքայական օպերայում: «Մադամ Բաթերֆլայն» Արքայական Օպերայում ամենաշատ բեմադրվող եւ իրավի ամենասիրված օպերաներից է:

Արքայական Օպերայի ներկայիս բեմադրության հեղինակներն են օպերային ճանաչված բեմադրիչներ **Մոշ Լեզիե** եւ **Պատրիս Քուրիե** ստեղծագործական զույգը: Առաջնախաղը կայացել էր 2003 թ.: Զուսպ, մինիմալիստական դեկորները, պաստելային երանգապնակը, ճապոնական ազգային զգեստները եւ արեւելյան բնաշխարհի եւ բուրումնավետ ծաղիկների թատերային պատրանքը հանդիսատեսին տեղափոխում են հեռավոր Ճապոնիա, որտեղ ծավալվում է դեռատի Չիո-Չիո-Սանի եւ ամերիկացի սպա Փինքերթոնի ողբերգական սիրո պատմությունը, որն ավարտվում է լքված հերոսուհու ինքնասպանությամբ:

Այս տարի Արքայական Օպերայում «Մադամ Բաթերֆլայի» առաջնախաղը կայացավ մարտի 14-ին, որտեղ գլխավոր դերում հանդես եկավ լիտվահայ սոպրանո Հասմիկ Գրիգորյանը, որը համարվում է այս դերի լավագույն կատարողներից մեկը: Ի դեպ, 2023 թ. Հասմիկ Գրիգորյանը շահել է «Տարվա Լավագույն Սոպրանո» հեղինակավոր մրցանակը Գերմանիայում, որի մրցանակաբաշխության ժամանակ երգել է Չիո-Չիո-Սանի հանրահայտ «Մի գեղեցիկ օր» արիան: Հասմիկ Գրիգորյանը հռչակավոր օպերային մեներգիչներ **Գեղամ Գրիգորյանի** եւ լիտվացի սոպրանո **Իռենա Միլկյավիչույտեի** դուստրն է: Գերմանիայում անցկացվող ամենամյա օպերային «Օսկարների» մրցանակաբաշխության ժամանակ



Հրաչուհի Բասենցը Չիո-Չիո-Սանի դերում

ցուցադրվեց «Մադամ Բաթերֆլայ»-ի հայտնի «Սիրի՛ր ինձ» զուգերգի տեսահոլովակը՝ իր մեծատաղանդ ծնողների կատարմամբ, որն երգչուհին դիտեց մեծ հուզմունքով:

Այս տարի Քովենթ Գարդենի բեմում Չիո-Չիո-Սանի դերում Հասմիկ Գրիգորյանի հինգ ելույթներն մեծ խանդավառությամբ ընդունեցին թե՛ խստապահանջ քննադատները, թե՛ հանդիսատեսը: Լոնդոնի հանդիսատեսը մեծ սպասելիքներ ուներ միջազգային մրցանակների դափնեկիր երգչուհու ելույթներից, որը նա միանգամայն արդարացրեց հենց առաջին ներկայացումից: «Գարդիան» օրաթերթի թղթակիցը գրեց. «Հասմիկ Գրիգորյանն առանց այլընտրանքի այստեղ գլխավոր գրավականն է: Թե՛ խաղով, թե՛ երգեցողությամբ, նա դերը այնպես է մարմնավորում, որին հազվադեպ է վիճակվում ականատես լինել»: Իսկ հեղինակավոր «Սթեյջ» մասնագիտական պարբերականը հաստատեց, որ նրա կատարումն «այս բարդագույն դերերգի ամենագեղեցիկ մեկնաբանումներից մեկն էր, որ երբեւէ դիտել ենք»:

Փինքերթոնի դերակատարը՝ բարեկազմ արտաքինով **Ջոշուա Գերերոնը** Լոնդոնում, ցավոք, նույն ընդունելությանը չարժանացավ: Ափսոսանքով պետք է նշել, որ ամենահնչեղ «Մի գեղեցիկ օր» արիայի ժամանակ, ինչպես նաեւ մեր տեսած երկու ներկայացումներին, նվագակցումը գերմանացի դիրիժոր **Քեվին Ջոն Եդուզեի** ղեկավարությամբ, չափազանց հուժկու էր եւ սքողեց Պուչինիի ամենագեղեցիկ կանացի արիայի նրբերանգները:

Կարեւոր է նաեւ արձանագրել, որ Հասմիկ Գրիգորյանի մասնակցությամբ, «Մադամ Բաթերֆլայ» օպերան երկու անգամ ուղիղ եթերով հեռարձակվեց Մեծ Բրիտանիայի տասնյակ կինոթատրոններում: Վերջինս պետական հիանալի նախաձեռնություն է՝ օպերան հասանելի դարձնելու հազարավոր նոր հանդիսատեսների անհամեմատ ավելի մատչելի գներով, քան օպերային տոմսերի արժեքն է:



Հասմիկ Գրիգորյանը Չիո-Չիո-Սանի դերում

Ապրիլի վեցից սկսյալ «Մադամ Բաթերֆլայի» գարնանային ներկայացումներն Արքայական օպերայում շարունակվեցին մասնակցությամբ նշանավոր սոպրանո Հրաչուհի Բասենցի, որը ստանձնեց Չիո-Չիո-Սանի դերերգը: Լիրիկական սոպրանո, միջազգային մրցույթների դափնեկիր Հրաչուհի Բասենցը, որը վաղուց ի վեր հաստատվել է Գերմանիայում եւ Դրեզդենի Պետական Օպերայի գլխավոր մենակատարուհիներից է 2018-ից, հաճախակի հանդես է գալիս աշխարհի լավագույն բեմերում: Իսկ Քովենթ Գարդենի օպերան դարձել է հայազգի երգչուհու երկրորդ տունը, որտեղ նա, իրավի, ամենասիրված մեներգչուհիներից է: Արքայական Օպերայում Բասենցի նախորդ դերակատարումներն արժանացել են հանդիսատեսի եւ քննադատների հիացմունքին:

2022-ին ինձ բախտ վիճակվեց Բասենցին դիտելու Վերդիի «Օթելլո» օպերայում՝ Դեզդեմոնայի դերում, որը լոնդոնյան հանդիսատեսը ընդունեց երկարատեւ օվացիաներով՝ առանց բացառության բոլոր արիաներից հետո: «Գարդիան» օրաթերթը Բասենցի դերակատարումը բնութագրեց որպես «բացառիկ ուրույն մեկնաբանություն» եւ «անմոռանալի հիշողություն»: 2019 թ. Վերդիի «Տրավիատայի» բեմադրության 25-ամյակին նվիրված հոբելյանական ներկայացմանը Հրաչուհի Բասենցը հրավիրվել էր կատարելու Վիոլետայի դերերգը՝ դարձյալ արժանանալով քննադատների բարձր գնահատականին: Ի դեպ, ուրախությամբ պետք է նշել, որ հայազգի մեներգչուհին կրկին Վիոլետայի դերով կմասնակցի Արքայական Օպերայի 2024-2025 թթ. թատերաշրջանի բացմանը սեպտեմբեր ամսին:

Չիո-Չիո-Սանի ողբերգական կերպարի մեկնաբանումը Բասենցի կողմից չափազանց հուզական էր՝ հագեցած երգչուհուն բնորոշ լուսեղեն ջերմությամբ եւ կերպարի անմիջականությամբ: Հատկապես տպավորիչ էր երկրորդ գործողության սկզբում «Մի գեղեցիկ օր» արիան Բասենցի կատարմամբ, երբ հերոսուհին մեծ ակնկալիքով եւ տվայտանքով սպասում է իր սիրեցյալ ամուսնու՝ Փինքերթոնի վերադարձին: Վերջինիս դերը հաջողությամբ մարմնավորեց տենոր **Յա-Չունգ Հուանգը**, որի հետ հայտնի «Սիրի՛ր ինձ» զուգերգը հագեցած էր խորը քնքշությամբ եւ անկեղծությամբ:

Առաջիկա հուլիսին Հրաչուհի Բասենցը եւս երեք անգամ բեմ կբարձրանա Մադամ Բաթերֆլայի դերով՝ իր յոթ ելույթներով եզրափակելով Արքանական օպերայի 2023-2024 թատերաշրջանը: Հանդիսատեսի ջերմ ընդունելությունից բացի նաեւ ակնկալում ենք հուլիսին կարդալու մասնագետների գնահատականները Բասենցի դերակատարման վերաբերյալ:

Վերջին տասնամյակներում հայ օպերային երգիչների աստղային հաջողությունները եվրոպական եւ համաշխարհային բեմերում վկայությունն են ոչ միայն նրանց բացառիկ բնածին տաղանդի, աշխատասիրության եւ արհեստավարժության, այլեւ հայ ազգային երաժշտական եւ դասական կրթության բարձր մակարդակի, որ թրծվում եւ ձեւավորվում է մասնավորապես Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում: Նման պրոֆեսիոնալ երաժշտական բարձր չափանիշներ եւ շրջանավարտներ ունեցող կրթօջախով անտարակույս կարող է հպարտանալ քաղաքակիրթ ամեն մի հասարակություն: Ազգային կոնսերվատորիան վստահաբար կշարունակի կրթել բազում նորահայտ արվեստագետներ, որոնք կշարունակեն աշխարհով մեկ հպարտորեն ներկայացնել հայրենի մշակութային հարուստ ավանդույթները եւ նորօրյա նվաճումները:

**Լոնդոն, ապրիլ, 2024**

# Իշխան Սաղաթելյանի ասած «կտրուկ գործողությունը» Աժ վերադառնալն ու «վոյաժների» մեկնելն էր

«Այդ ընթացքում մենք ամեն օր Երևանում ունենալու ենք տարբեր տիպի բողոքի ակցիաներ ու անհնազանդության գործողություններ ու երթեր մինչև ամսի 1-ը, դրանից հետո անցնում ենք շատ ավելի կոնկրետ ու հստակ գործողությունների». ՀՅԴ գերագույն մարմնի ներկայացուցիչ, պատգամավորի մանդատ ունեցող **Իշխան Սաղաթելյանը**, որին քաղաքական իշխանությունը ԱԺ փոխխոսնակի աթոռից զրկեց պաշտոնավորումից մոտ մեկ տարի անց, այս հայտարարությունն արել է 2021-ին:

«Մինչեւ վերջ պայքարելու» մասին հայտարարող Սաղաթելյանն ու ելույթի համար իրար ձեռքից միկրոֆոն փախցնող մյուս գործիչները խոստանում էին՝ խորհրդարան կգնան կա՛մ նոր վարչապետ ընտրելու, կա՛մ ԱԺ չեն վերադառնա:

«Մենք հստակ ունենք ծայրից ծայր գծված ծրագիր, որը բերելու է սրանց հեռացմանը, վստահ եղեք, թիկունք կանգնեք, միասին՝ մինչև վերջ», - մեծախոսում էր դաշնակցական գործիչը:

Խրոխտ այս հայտարարությունից հետո անցել է ուղիղ երեք տարի, եւ ներկայացնում ենք, թե խոսքից անդին՝ իրականում ի՞նչ «կտրուկ գործողություններ» են արել ընդդիմադիրները: «Ուլտրաընդդիմադիրները», չհաջողելով փողոցային պայքարն ու վիժեցնելով մերթընդմերթ արթնացող մարդկային ցասումը, խելոք-խելոք խորհրդարան վերադարձան եւ երիցս լեգիտիմացրին ՔՊ-ի եւ անձամբ **Փաշինյանի** իշխանությունը:

Շարունակեցին ստանալ եւ այսօր էլ ստանում են ամսական 460 հազար աշխատավարձ, 250 հազար գրպանի գումար եւ եռամսյակային պարգեւավճար: ՔՊ-ականների հետ մեկնում են գործուղումների (իրականում՝ վոյաժների) եւ խիստ «բովանդակային» այդ այցերն անմահացնում լայնժպիտ լուսանկարով՝ իշխանականների կողքին կանգնած:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# Ետդարձ դեպի Ռուսաստա՞ն

**ՍՈՒՐԵՆ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ**
Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ



Նախքան որ Հայաստանի իշխանությունները, ներքին խլրտումների պայմաններում, կիայտարարեին սահմանազատման գործընթացի հետեւանքում Տավուշի չորս գյուղերի հանձնումը Ադրբեջանին, երկրում քննարկման գլխավոր թեման այն էր, թե արդյոք ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** կմասնակցի՞ Մոսկվայում մայիսի 7-ին կայանալիք ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինի** երդմնառության տոնակատարությանը: Հնարավոր պատասխանը այո էր: Քանի որ ՀՀ վարչապետը մասնակցել էր Թուրքիայի նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանի** երդմնառությանը, ճիշտ չէր լինի բաց թողնել Պուտինի նախագահ վերընտրվելու առթիվ նախատեսված երդմնառությանը: Դրան չմասնակցելը բազում հարցեր կառաջացներ ինչպես Հայաստանի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ միջազգային աշխարհում: Անշուշտ նման ենթադրությունները հիմնված են տրամաբանական բնականոն մտածելակերպի վրա եւ ոչ թե անկանխատեսելի քայլերի, որոնցով հաճախ առաջնորդվում է Հայաստանի վարչապետը:

Արժե նշել, որ Փաշինյանը հավանաբար հրավիրված է նաեւ մասնակցելու մայիսի 9-ին Մոսկվայում Հայրենական մեծ պատերազմի (կամ՝ ինչպես Արեւմուտքն է անվանում՝ Համաշխարհային 2-րդ պատերազմի) հաղթանակի 79-ամյակին նվիրված շքերթին: Հաշվի առնելով արտաքին պատժամիջոցները, միայն բարեկամական երկրների ղեկավարներն են հրավիրված Պուտինի երդմնառությանը, որոնցից շատերը երկու օր անց հավանաբար ներկա են լինելու նաեւ Հաղթանակի տոնախմբությանը: Նման որոշումը ծառայելու է որպես Ռուսաստանի կողմից Արեւմուտքին ուղղված ուղերձ, հատկապես ներկա իրադարձությունների խորապատկերում, երբ Մ. Նահանգների կոնգրեսը ընդամենը օրեր առաջ հավանություն տվեց Ուկրաինային հավելյալ օգնություն ցուցաբերելու նախագծին:

Հետաքրքրական է ընդգծել, որ Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւը** Մոսկվա այցելեց ապրիլի 22-ին հանդիպելու նախագահ Պուտինի հետ, ըստ երեւույթին հասկացնելու, որ հնարավոր է չմասնակցի երդմնառությանը եւ զորահանդեսին, չնայած չի բացառվում, որ նա դարձյալ հայտնվի Ռուսաստանի մայրաքաղաքում:

Ճիշտ է, Եվրոհանձնաժողովի նախագահ **Ուրսուլա ֆոն դեր Լայենի** եւ ԱՄՆ Պետքարտուղար **Էնթընի Բլինքենի** հետ հանդիպումներից հետո Հայաստանը ստացավ ֆինանսական օժանդակություն, բայց ոչ մի պարտավորվածություն՝ Եվրոմիության կամ ՆԱՏՕ-ի անդամակցության կամ էլ անվտանգության որեւէ տեսակի երաշխավորության վերաբերյալ, ինչը նշանակում է, որ Հայաստանը կարող է ետ շրջվել Արեւմուտքից եւ մնալ առանց որեւէ մեկ պետության հովանավորության ներքո: Սա կարող է անապահովության լուրջ խնդիրներ առաջացնել տեղացի բնակչության շրջանում, ինչպես տեղի է ունենում այժմ Տավուշի գյուղերում: Անվտանգության երաշխիքներ տրամադրելու Արեւմուտքի անկարողության պայմաններում, Հայաստանը ստիպված է երաշխիքներ որոնել այլ վայրերում: Բայց առկա մարտահրավերների լրջությունը չափազանց դժվարացնում է գտնել համապատասխան հովանավոր մի պետություն, որը կցանկանար անվտանգության հարցերով օգնել Հայաստանին: Եթե Ռուսաստանի եւ Իրանի օրինակները վերցնենք, որպես տարածաշրջանային դերակատարների, ապա այդ երկու պետություններն այժմ այնքան են խրված իրենց սեփական մարտահրավերները դիմակայելու մեջ, որ դժվար թե համաձայնվեն հավելյալ բեռ վերցնել իրենց ուսերին:

Բայց Փաշինյանի նախատեսված այցելությունը Մոսկվա կարող է ճակատագրական լինել Հայաստանի համար: Անվտանգության երաշխիքների բացակայությունը անհրաժեշտություն է առաջացնում վերականգնելու հարաբերությունները Մոսկվայի հետ: Հաշվի առնելով Պուտին-Ալիեւ եւ Պուտին-Փաշինյան հանդիպումները, կարելի է ենթադրել, որ Ռուսաստանը փորձում է դարձյալ միջնորդի դերը ստանձնել եւ եռակողմ բանակցությունների հարթակ հանդիսանալ, ինչպես տեղի ունեցավ 2020 թվականի պատերազմի ավարտին:

Պետքարտուղար Բլինքենը վերջերս հավանություն տվեց հայկական չորս գյուղերը Ադրբեջանին փոխանցելու երկու կողմերի ձեռք բերած համաձայնությանը, նշելով, որ Մ. Նահանգները գոհ է գործընթացից, չնայած այն իր միջնորդական առաքելությունից դուրս է գտնվում: Հայաստանում Մ. Նահանգների դեսպանը նույնպես նշեց, որ Հայաստանը բաց է բոլոր նրանց առաջ, ովքեր պաշտպանում են խաղաղության գործընթացը, որը կարող է բարենպաստ լինել նաեւ Վաշինգտոնին, եթե նույնիսկ Մ. Նահանգները չէ միջնորդը:

Նման դիրքորոշումը ցույց է տալիս, որ Վաշինգտոնը համոզված է, որ անվտանգության երաշխիքներ ստանալու լավագույն տարբերակը Հայաստանի համար ետդարձ կատարելն է դեպի Ռուսաստան: Այս մասին RAND կորպորացիան էր վերջերս նշում իր հրատարակած մի հոդվածում:

Շահագրգիռ բոլոր կողմերն էլ հասկանում են, որ անվտանգության երաշխիքների բացակայությունը ստիպում է Հայաստանին միակողմանի զիջումներ կատարել, փոխանակ ներքին բարեփոխումների հարցեր լուծելու: Հայաստանն անընդհատ մի բան վերակազմակերպելու, վերանայելու պահանջն ունի, խուսափելու համար մի նոր պատերազմից: Եվ քանի այս իրականությունը հասկանալի է բոլորին, բոլորն էլ գործում են հոգուտ իրենց շահերի, առանց Հայաստանի հանդեպ որեւէ պարտավորվածություն հանձն առնելու կամ նույնիսկ օգնելու ցանկություն ցուցաբերելու:

Անգլ. բնագրից թարգմանեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

# Ջրիկ քաղաքականություն



* Իմ սերնդակիցները երեւի լավ կհիշեն ջրի բաժակը ձեռքին ԽՍՀՄ առաջին եւ վերջին նախագահ Միխայել Գորբաչովի՝ 1986 թ. Ռեյկյավիկում արտասանած հայտնի խոսքերը «Շատ կցանկանայի ասածներիս մեջ ջուրը քիչ լիներ, բայց այս անգամ էլ չստացվեց»: Այդ խոսքերով, Գորբաչովը խոստովանում էր, որ սովորաբար իր ասածների մեծ մասը «ջուր» է:

* Համաձայն նորկտակարանային ավանդության՝ Պիղատոս Պոնտացին, հակառակ իր ներքին համոզմունքի Քրիստոսին դատապարտել է խաչելության: Արյունահեղության մեջ անմեղությունը խորհրդանշող հին հրեական սովորույթի համաձայն՝ Պիղատոս Պոնտացին ժողովրդի առջեւ ձեռքերը ջրով լվանում է, հասկացնել տալով, որ ինքը կապ չունի այդ որոշման հետ:

* Ըստ ավանդույթի, արաբների կողմից գերեվարված պարսից զորավար Հորմոզանը մահապատժի ենթարկվելուց առաջ, որպես վերջին ցանկություն Խալիֆա Ումարից ջուր է պահանջում եւ խնդրում քանի դեռ ջուրը չի խմել, իրեն չսպանեն: Երբ Հորմոզանը Խալիֆա Ումարից կորզում է նման խոստում, անմիջապես ջուրը գետնին է լցնում եւ արաբ խալիֆան, չդրժելով իր խոստումը, հրաժարվում է զորավարի մահապատժից:

* ԻԻՀ էքսնախագահ Հասան Ռոհանին համաճարակի օրերին Իրանին մարդասիրական օգնություն առաջարկող ԱՄՆ նախագահին համեմատել է այն անձի հետ, ով արգելափակել է մուտքը դեպի մաքուր ջրով ջրհորը եւ ձեռքին մի բաժակ պղտոր ջուր պահած՝ ասում է. «Ես եկել եմ օգնելու»: Թեհրան-Վաշինգտոն հարաբերությունների պատմության մեջ թեւավոր խոսքի արժեք ստացած «Մեզ պղտոր ջուր պետք չէ» արտահայտությունը հայտնի է շատերին:

* Մեր կառավարության ղեկավարը տարածքային ամբողջականությունն իրավագիտության հետ համադրելով, սրվակի ջուրը թափում է աշխատասենյակին ու խոսում ինքնիշխանության, իրավունքի ու պարտականությունների լղոզվածության մասին ու հերթական անգամ փորձում ստուգել իր ունկնդիրների ընկալունակության ու համբերության աստիճանը:

* Մեր ժողովրդի ձեռքին էլ կա մի բաժակ, որի անունը «համբերություն» է: Եվ երբ այդ բաժակը լցվում է, ժողովուրդն էլ սկսում է իր բաժակը պարպելու համար ելք փնտրել:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# Սահակ Սահակյանին հրաժարվել են «Եռաբլուր»-ում հուղարկավորել

Մերօրյա իշխանավորները փաստացի երկյուղ եւ դող ունեն Արցախ բառից, առավել եւս՝ Արցախյան առաջին պատերազմի մասնակիցներից: Այն աստիճան, որ անգամ մահացած մարդուց են վախենում, հրաժարվում՝ հավուր պատշաճի կազմակերպել պետականության կայացման գործում ներդրում ունեցած անհատի վերջին հրաժեշտի արարողությունը: Օրեր առաջ են հողին հանձնել Արցախյան ազատագրական պայքարի մասնակից, ռազմահայրենասիրական երգերի անզուգական կատարող **Սահակ Սահակյանին**: Պարզվում է՝ Կամերային երաժշտության ազգային կենտրոնի տնօրենությունը մերժել է իր հարկի տակ հրաժեշտ տալ Սահակ Սահակյանին: «Վերեւից արգելում են»,- պատճառաբանել են Կամերայինից:

Բայց սա դեռ ամենը չէ: «**Ազգ**»-ի տեղեկություններով՝ Քաղաքային իշխանությունները մերժել են Սահակ Սահակյանին հուղարկավորել Երեւան համայնքի գիտության եւ մշակույթի գործիչների պանթեոնում՝ Թոխմախում: «Կոչում չունի, տեղն էլ քիչ է». նրա հարազատներին այսպես են պատճառաբանել: Բայց ամենաասոսկալին այն է, որ նման պատասխան է տվել նաեւ պաշտպանության նախարարությունը: «Նրա ցանկությունը Եռաբլուրում հուղարկավորելվել էր՝ մարտական ընկերների կողքին: Դա էլ են մերժել»,- «**Ազգ**»-ի հետ զրույցում ասաց Սահակ Սահակյանի ընտանիքի անդամներից մեկը:



ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԳ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
“AZG” Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 4.05.2024, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: